

«Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան»

(Եբր.13:8)

Շրջաբերական նամակ

Փետրվար 2006

Միսիոներական գործի 40 տարիները

ՀԱՅԱՑՔԱՆՑՅԱԼԻՆ, ՆԵՐԿԱՅԻՆԵՎԱՊԱԳԱՅԻՆ

Քրիստոսով սիրելի եղբայրներ և քույրեր, ողջունում են ձեզ բոլորիդ Գործք 20:26-27 համարներում գրված խոսքով՝ «Սրա համար այսօր վկայում են ձեզ, որ բոլորիդ արյունից անպարտ են: Որովհետև ես Աստծո ողջ կամքը ձեզ հաղորդելուց հետ չքաշվեցի», ինչպես նաև Հայտն.1:4 համարում գրված խոսքով՝ «Շնորհք լինի ձեզ հետ և խաղաղություն Նրանից, որ է, որ էր և որ գալու է...»:

Նա, ով գրում է մարդկության վերաբերյալ Աստծո փրկության ծրագրի վերաբերյալ, պետք է ընդգրկի անցյալը, ներկան և ապագան: Այն, ինչ Աստծո թագավորությունում կատարվել է անցյալում, նախորդել է այժմ կատարվող դեպքերին, դրանք էլ նախորդում են ապագայում կատարվելիք դեպքերին: Աստծո ճշմարիտ զավակները, որոնք առաջնորդվում են Սուրբ Հոգով, միշտ մասնակից են լինում այն բաներին, ինչ Աստված անում է իրենց ժամանակներում: Նրանք կարողանում են ճիշտ դասավորել անցյալում կատարված իրադարձությունները, միանալ փրկության ծրագրի հետ կապված իրադարձություններին ներկայում և խոստումների հիման վրա հստակորեն հասկանալ այն, ինչ լինելու է ապագայում:

Օրինակ, նրանք, ովքեր ընդունեցին Հովհաննես Մկրտչին, որպես Աստծուց ուղարկված մարդու (Հովհ. 1:6,7), ոչ մի դժվարություն չունեցան ճանաչելու Հիսուս Քրիստոսի ծառայությունը: Տիրոջ ճանապարհը պատրաստողի առաջադրանքն էր Հին Ուխտի հավատացյալների սիրտը դարձնել Նոր Ուխտի զավակների հավատքին (Ղուկ.1:16,17): Փարիսեցիներն ու դպիրները չնկրտվեցին Հովհաննես Մկրտչի կողմից, չենթարկվեցին Աստծո կանքին՝ այդպիսով մերժելով Աստծո փրկության խորհուրդը (Ղուկ. 7:27-30):

Ահա թե ինչու նրանք մասնակից չեղան այն բանին, ինչ Աստված կատարեց նորկտակարանյան եկեղեցու հիմնումից ի վեր: Նրանք մնացին իրենց կրոնական ավանդույթների մեջ, մեծ անկեղծությամբ խարսխված մնացին դրանց մեջ, իրենք չմտան Աստծո թագավորությունը և ժողովրդին էլ խանգարեցին մտնել: Միշտ այդպես է եղել անցյալում, երբ Աստված ինչ-որ բան էր անում երկրի վրա: Այդպես էլ կլինի մինչև վերջ: Քանի որ իրենց ժամանակում չճանաչեցին Աստծո շնորհքի այցելությունը, դատաստանը հասավ նրանց վրա, ինչպես Տերն ասել էր Ղուկ.19:41-44 համարներում:

Ք Ա Ռ Ա Ս ՈՒ Ն Տ Ա Ր Ի Ի՝ Ա Ս Տ Վ Ա Ծ Ա Շ Ն Չ Ա Յ Ի Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Յ Ա Տ Վ Ա Ծ

Թե՛ Մովսեսի՝ Հին Կտակարանի ամենամեծ մարգարեի, թե՛ Դավթի՝ Իսրայելի առանձնահատուկ կերպով օծված և օրհնված թագավորի կյանքում եղել է քառասուն տարի տևող ժամանակահատված, որը Աստծո կամքին համապատասխանող ժամանակաշրջան էր Իր ծառաների և Իր ժողովրդի համար: Այն, ինչ ըստ Աստծո փրկության ծրագրի կատարվում է Իսրայելի, ինչպես նաև եկեղեցու հետ, որոշված է եղել նախօրոք: Նույնը վերաբերում է բոլոր նրանց, ովքեր մասնակից են դրանց: Այդպես է միշտ կատարվում Հռոմ.11:7 համարում գրված խոսքը՝ «... սակայն ընտրյալները հասան...»:

Արդեն աշխարհի ստեղծումից առաջ, սկզբից առաջ, երբ դեռ ժամանակը չէր սկսվել, Աստված հաստատել էր Իր փրկության ծրագիրն ամբողջությամբ: Նա լավ գիտեր, որ Իր պատկերով ստեղծված առաջին որդին՝ Ադամը, իր մարմնեղեն մարմնում պետք է ընկներ: Դրա համար անհրաժեշտ էր, որ Միածին Որդին՝ որպես վերջին Ադամ, հայտնվեր մարմնեղեն մարմնով: Դա անհրաժեշտ էր մեզ մեղքից և մահից ազատելու համար, որովհետև մահը փոխանցվեց բոլոր մարդկանց մեղքի մեջ անկման ժամանակ: Ադամը ստեղծված էր Աստծո պատկերով (Ծննդ. 1:27, 5:1), իսկ Քրիստոսը Աստծո պատկերն էր (2 Կորնթ. 4:3-6, Եբր.1:3):

Բոլորին հայտնի է, որ Ավետարանը նորից սկսվեց քարոզվել վերջին հինգ հարյուր տարիների ընթացքում, Ռեֆորմացիայի պոռթկումից ի վեր: Տարբեր արթնությունները, որոնք եղան այդ ժամանակից ի վեր, ամեն անգամ նոր սկիզբ էին հանդիսանում և յուրաքանչյուրը նպաստում էր հաջորդ արթնության պատրաստվելուն: Մոտ հարյուր տարի առաջ մեկ անգամ ևս նոր սկիզբ եղավ՝ Պենտեկոստեի մեծ արթնությունը, որում Աստծո Հոգին գործում էր զորավոր ձևով: Մոտ վաթսուներորդ տարի առաջ Աստված, գերբնական ձևով կանչելով Ուիլյամ Բրանհամին, 1946 թվականի մայիսի յոթին դրեց նոր սկիզբ: Դրանից հետո սկսվեց բոլոր ժամանակների փրկության և բժշկության ամենամեծ արթնությունը, որը շարունակվեց տարբեր շարժումներում, այն բանից հետո, երբ Աստծո մարդը տուն վերադարձավ 1965 թվականի դեկտեմբերի 24-ին:

Քանի որ Աստծո շնորհքով ես անձնական մասնակցություն եմ ունեցել այն բանին, ինչ Աստված խոստացել է այս ժամանակի համար և հիմա կատարում է, կուզենայի լուսաբանել այն քառասուն տարիները, որոնք կապված են աստվածային փրկության պատմության հետ: Երախտագիտությամբ լեցուն եմք նայում այն բաներին, ինչ մեր հավատարիմ Տերը կատարել է այս ժամանակահատվածում Իր ժողովրդի մեջ, և որն իր մեջ ընդգրկում է նաև իմ կյանքի պատմությունը: Նրանք, ովքեր ավելի ուշ են միացել, իրավունք ունեն իմանալու, թե ինչպիսին է եղել նոր սկիզբը, ինչպես, որ իրավունք ունեն իմանալու, թե ինչպիսին է լինելու հրաշալի շարունակությունը: Տասը տարի շարունակ ամձնական հաղորդակցություն եմ ունեցել Բրանհամ եղբոր հետ, և քաջատեղյակ եմ նրա կանչին և նրա ստացած հանձնարարությանը: Նա պատմության մեջ մտավ որպես Աստծո մարդ, և Խոսքի վրա հիմնված նրա պատգամը, եթե նույնիսկ հանդիպում է հակառակության, նախորդում է Քրիստոսի երկրորդ գալստին, ինչպես ասվել էր 1933 թվականի հունիսի 11-ին: Եթե ես պատմում եմ, թե ինչպես է Տերն առաջնորդել և հիշատակում եմ որոշ փորձառություններ, դա անում եմ միայն նրա համար, որ բոլորն իմանան, որ Աստված գործել է նաև մեր ժամանակներում:

Նախ, ես մեծ առանձնաշնորհում ունեցա 1965 թվականի օգոստոսի 13-ից մինչև 19-ը մասնակցելու Կարլսրուե քաղաքում տեղի ունեցած նրա հավաքությանը: Դա մի առանձնահատուկ փորձառություն էր, և ես առաջին իսկ օրվանից համոզված էի, որ ոչ ոք չի կարող կատարել այն գործերը, որոնք կատարվում էին այնտեղ, եթե Աստված նրա հետ չլինի և չկատարի դրանք: Իսկապես կույրերը վայրկենապես տեսողություն էին ստանում, անդամալուծները՝ քայլում, հիվանդները՝ բժշկվում և այլն: Ես ապրեցի այնպիսի օրեր, ինչպիսիք եղել են Աստվածաշնչի և առաքյալների ժամանակներում, իմ ականջներով լսեցի և իմ աչքերով տեսա այն, ինչ նրանք էին լսել և տեսել: Ինչ օրհնության ժամանակ էր: Ես ինքս քարոզում էի 1953 թվականից, բայց այս հավաքությունում տեսնում էի, թե ինչպես է Հիսուս Քրիստոսը ամեն երեկո հաստատում, որ Ինքը նույնն է երեկ, այսօր և հավիտյան: Եվ ես ուզում էի իմանալ, թե ինչպես է հավատում և ինչ է սովորեցնում այդ մարդը, որովհետև պարզ տեսնում էի, որ Աստված նրա հետ էր:

Ես գիտեի, թե ինչքան տարբեր ձևերով էին մարդիկ հավատում և սովորեցնում, բայց սրտումս դրված էր սովորել և ճանաչել «Ճշմարիտ Ավետարանը» և «Ճշմարիտ վարդապետությունը», որն Աստված այնքան զորավոր ձևով հաստատում էր իմ աչքերի առջև: Այդ մեծ փափագով ես մասնակցեցի «Voice of healing»-ի մեծ կոնֆերանսին, որը տեղի ունեցավ Միացյալ Նահանգների Տեխաս նահանգի Դալաս քաղաքում, որը կազմակերպել էր Գորդոն Լինդսեյը 1958 թվականի հունիսի 6-ից 15-ը: Առավոտվա և կեսօրի հավաքություններին հայտնի ավետարանիչներն էին խոսում, իսկ երեկոյան հավաքություններին Բրանհամ եղբայրն էր հիմնական քարոզիչը: Այդպիսով ես ունեցա հնարավորություն համեմատություն կատարելու, թե երեք օրը ինձ բավական էր պարզ տեսնելու համար:

Ինչպես, որ Տերը, որպես մարդու Որդի, տեսիլքով տեսնում էր, թե ինչ էր կատարվելու՝ «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. Որդին իրենից չի կարող

ոչինչ անել, եթե չտեսնի Դորն անելիս...» (Յովհ.5:19), այնպես էլ Բրանհամ եղբայրը տեսիլքով տեսնում էր այն բաները, ինչ վերաբերում էին այն մարդուն, ում համար աղոթում էր: Երբ տեսիլքում տեսնում էր, որ այդ մարդը բժշկված է, անկախ նրանից, թե ինչ հիվանդությունից էր նա տառապում, աստվածային իշխանությամբ ասում էր. «Եղի՛ր բժշկված, առողջացիր Նազովրեցի Տեր Դիսուս Քրիստոսի անունով: Քո հավատքը քեզ բժշկեց»: Եվ դա կատարվում էր նույն պահին: Այդ եզակի ծառայության միջոցով բառացիորեն կատարվում էր այն, ինչ գրված էր Յովհ.14:12 համարում. «Ինձ հավատացողը կանի այն գործերը, որ ես եմ անում...»: Միլիոնավոր մարդիկ այդ տեսել են քսան տարիների ընթացքում 1946-1965 թվականներին: Դա չեն կարող ժխտել, այլ միայն մերժել: Այն, ինչ Բրանհամ եղբորը տարբերում է մյուս ավետարանիչներից, դա Աստծո կողմից հաստատված ծառայությունն է:

Դալասում տեղի ունեցած մի երեկոյան հավաքության ժամանակ նա ասում էր խոսել Բրանհամ եղբոր հետ, և ասացի նրան. «Բրանհամ եղբայր, ես ճանաչում եմ, որ դու Աստծուց ուղարկված մարդ ես, և տեսնում եմ քո և մյուս ավետարանիչների միջև եղած տարբերությունը: Ուզում եմ իմանալ, թե ինչպես ես հավատում և սովորեցնում»: Այն ժամանակ ես «պատգամի» մասին գաղափար չունեի: Նա պատասխանեց. «Գնա Լեո Մերսիեի մոտ. նա է ձայնագրում քարոզները: Խնդրիր քեզ տալ դրանցից մի քանիսը»: Վերջում նա ինձ ասաց. «Ֆրանկ եղբայր, դու այս պատգամով կվերադառնաս Գերմանիա»: Հաջորդ օրը ես գնացի Մերսիե եղբոր մոտ, և նա ինձ տվեց հինգ ձայնագրված քարոզ: Նա ինձ ասաց. «Ֆրանկ եղբայր, եթե քարոզները լսելուց հետո էլի կուզենաս, հայտնիր մեզ»: Ես պատասխանեցի. «Ահա իմ հասցեն. ուղարկիր ինձ Բրանհամ եղբոր բոլոր քարոզները»: Այսպես, 1958 թվականից ես ստացել եմ բոլոր քարոզները, որոնք Բրանհամ եղբայրը քարոզել է Միացյալ Նահանգներում:

Կոչումը, որ ես ստացա 1962 թվականի ապրիլի երկուսին, ծանոթ է բոլոր նրանց, ովքեր տեղյակ են վերջին ժամանակների պատգամից: Նրանք նույնիսկ գիտեն, որ Բրանհամ եղբայրը հաստատեց այդ 1962 թվականի դեկտեմբերի երեքին Բենքս Կուդ և Ֆրեդ Սոտման եղբայրների ներկայությամբ, որոնք դեռ ապրում են, և Աստված Ինքը հաստատել է դրա ճշմարտացիությունը վերջին քառասուն տարիների ընթացքում:

Ձրույցի վերջում Բրանհամ եղբայրն ասաց. «Կերակուրը, որը պետք է հավաքես, մեր ժամանակների համար խոստացված և բացահայտված խոսքն է: Բայց սպասիր, մինչև ստանաս մնացած կերակուրը»: Ես պետք է ասեմ, որ մինչ այդ նրա տված պատասխաններից այդ մասն ինձ համար մնում էր անհասկանալի: Ես կարծում էի, որ դրանով իմ ժամանակը եկել է: Ինձ տխրեցրեց այն, որ պետք է էլի սպասեմ: Հետագայում ինձ համար պարզ դարձավ, որ սպասելը վերաբերում էր երկրորդ մասին, այսինքն՝ կերակրի բաժանմանը, որը Բրանհամ եղբայրը պետք է հավաքեր, բայց չէր վերաբերում առաջին մասին, այսինքն՝ քաղաքից քաղաք գնալուն և Աստծո խոսքը քարոզելուն:

Ձրույցը շարունակվում էր: Հետո հանկարծ Բրանհամ եղբայրը լռեց, և անսպասելիորեն ասաց. «Ֆրանկ եղբայր, երուսաղեմ կատարած Պողոսի

ճանապարհորդության մասին չպետք է մտահոգվես. դա Աստծո կամքով էր»: Դա ինձ մտահոգել էր բազում տարիներ, և ես չէի կարողանում հասկանալ, թե ինչու Պողոսը մտավ Երուսաղեմի տաճար, ուխտ արեց և օրենքի համաձայն վճարեց իր և իր հետ գտնվողների համար և այլն (Գործք 21-րդ գլուխ), որովհետև դա հակասում էր այն բանին, ինչ նա ապրում և քարոզում էր: Շատ տարիներ առաջ ես մի օր ասել էի. «Պողոս, հենց քեզ երկնքում տեսնեմ, սրա մասին կհարցնեմ»: Բրանհամ եղբոր հետ գրույցի ժամանակ բոլորովին չէի մտածել այդ մասին: Մինչդեռ Աստված, որ ամեն բան գիտի, այն հայտնել էր Իր մարգարեին: Զրույցի ժամանակ Բրանհամ եղբայրը նաև ասաց, որ Աստծո կամքով Դեյվիդ Դյուպլենսիի հետ գալու է Գերմանիա, ինչը, ցավոք սրտի, չիրականացավ:

Գերմանիայի վերաբերյալ ինձ վաղուց անհանգստացնում էր մի հարց. արդյոք անեծք կար Գերմանիայի վրա երրորդ Ռեյխի ժամանակ 6 միլիոն հրեաների կոտորածի պատճառով, ինչպես այդ հաստատում էին պատերազմից հետո պետական և անկախ եկեղեցիներում: Ես նրան հարցրի այդ մասին, և նա անմիջապես պատասխանեց. «Ոչ, Գերմանիայի վրա անեծք չկա: Աստված դատաստանի կկանչի միայն նրանց, ովքեր պատասխանատու են դրա համար, ովքեր արել են այդ»: Նաև ուզում էի Բրանհամ եղբորից իմանալ, թե արդյոք ես էլ կարող եմ աղոթել հիվանդների համար: Նորից նա անմիջական պատասխան տվեց. «Ֆրանկ եղբայր, Աստված քեզ կանչել է, և բոլոր նրանք, ովքեր կանչվել են Ավետարանը քարոզելու, կանչվել են նաև հիվանդների համար աղոթելու: Դա էլ է ավետարանչական պատվերի մեջ մտնում»:

Յետո Բրանհամ եղբայրն ինձ հարցրեց, թե արդյոք կարող եմ իր փոխարեն խոսել «Լրիվ Ավետարանի գործարարների» հավաքություն, որը տեղի էր ունենալու Լոս Անջելեսում: Յունվարի սկզբին ընտանիքով պետք է տեղափոխվեր Թուսոն, դրա համար չէր կարող ճամփորդություն կատարել Լոս Անջելեսում: Նա զանգահարեց Դեմոս Շաքարյանին և նրան տեղեկացրեց, և այդպիսով 1962 թվականի դեկտեմբերի տասին ես գլխավոր քարոզիչն էի «Կլիֆտոնի սրճարանում»: Բրանհամ եղբայրը ինձ ասաց նաև Յենրի Մարտինի մասին, որը եղմոնտոնից էր, որը նույնպես, ինչպես մեզ մոտ՝ Գերմանիայում, գերմանախոս մարդկանցից բաղկացած մի փոքր խմբի հետ լսում էր ձայնագրված քարոզները: Այդպես ես Լոս Անջելեսից ճանապարհս շարունակեցի և գնացի Կանոդա, և Մարտին եղբայրը ինձ տարավ գերմանախոս եղբայրների և քույրերի տուն: Յետո այդ հանդիպման շնորհիվ հնարավորություն ստեղծվեց իրատարակել մեր գրքույկները անգլերեն լեզվով և տարածել աշխարհով մեկ:

ՆՈՐՄԱԿԻՉ

Առանց իմանալու, որ 1965 թվականի դեկտեմբերի 24-ին Բրանհամ եղբայրը տուն է կանչվել, նույն օրը ես տեսա նրան ամառի վրա նստած: Այդ ժամանակ նրան հարցրի. «Բրանհամ եղբայր, դու մարդու Որդին չես, ինչու՞ եմ քեզ

տեսնում ամպի վրա»: Հետագայում ես իմացա, որ դա հենց այն ժամն էր, որում Բրանհամ եղբայրը գնացել էր փառքի մեջ: 1966 թվականի հունվարի սկզբին Միացյալ Նահանգների Փենսիլվանիա նահանգից Արմբուստեր եղբայրը ինձ նամակով տեղեկացրեց, որ ավտոմոբիլային վթարից վեց օր հետո, դեկտեմբերի 24-ին Բրանհամ եղբայրը Տուն է գնացել: Կարճ ժամանակից ես Աստվածաշնչում գտա, որ ոչ միայն մեր Տիրոջ մասին է գրված՝ «... և մի ամպ նրան վերցրեց» (Գործք 1:9), այլև երկու մարգարեների մասին Հայտն.11:12 համարներում. «... և ամպով երկինք բարձրացան...»: Հետո աստիճանաբար ինձ համար պարզ դարձավ, որ մենք գտնվում ենք փրկության պատմության ամենակարևոր ժամանակաշրջանում: 1965-1966 թվականի ամառային գիշերվա աղոթաժողովի ժամանակ Աստծո Հոգին զորավոր կերպով գործեց մեր մեջ: Երկու 120 հոգի հավաքված էին, և բոլորը զգացին Տիրոջ ներկայությունը: «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՍ ՏԵՐԸ» խոսքի միջոցով ինձ ասվեց. «Իմ ծառա, ես դրել եմ Իմ սուրը քո ձեռքում»: Պետք է խոստովանեմ, որ սկզբում ներքուստ մերժեցի այդ խոսքը, որովհետև կարծում էի, որ Տերը Իր սուրը դրել էր Բրանհամ եղբոր ձեռքում: Մենք բոլորովին չգիտեինք, որ նա Տուն է վերադարձել: Միայն հետագայում ես հասկացա, որ Տերն իրոք ինձ վստահել էր Իր սուրը, Հոգու սուրը (Եփես.6:17), այսինքն՝ Աստծո խոսքը, ինչպես ինձ ասվել էր իմ կանչման ժամանակ. «Ես քեզ ուղարկելու եմ ուրիշ քաղաքներ՝ Իմ խոսքը քարոզելու»:

1966 թվականի հունվարի 19-ին ես հոգով տեղափոխվեցի մի մեծ հավաքության վայր: Մի կողմը ամուր կառույց էր՝ վերնասրահ ունեցող տաճարի նման, իսկ մյուս մասը շրջանաձև վրանի պես էր: Ես նստած էր վերնասրահում և նայում էի, թե ինչպես էր բազմությունը հավաքվում դահլիճում: Բոլորը նստեցին իրենց տեղերը, և կարգ ու կանոնի պատասխանատուները, որոնք ճանաչվում էին թևի ժապավեններով, հետ ու առաջ էին քայլում կենտրոնական միջանցքով: Հետո տեսա, թե ինչպես Յուլիուս Շտադսկեյվը՝ Բրանհամ եղբոր մտերիմ ընկերներից մեկը, նայեց վերև և ինձ ասաց. «Ֆրանկ եղբայր, քո ժամանակն է, իջիր»: Ես վեր կացա և իջա. սանդուղքը բացվում էր դեպի վրանը, այնպես, որ հավաքված հազարավոր մարդիկ ինձ տեսան: Բարձրացա բեմ և այնտեղ կանգնած լսեցի այս խոսքերը. «Մենք այստեղ ենք ոչ թե Հովհաննես Սկրտչի պատճառով, այլ որովհետև Ուրիյան Բրանհամը՝ Աստծո մարգարեն, վերցվեց մեզանից»: Եվ հանկարծ մի ձայն ասաց. «Դիմիր այստեղ հավաքված ժողովրդին և ասա նրանց. «Տիրոջ գալուստը շատ մոտ է»»: Այսպես, տեսիլքի մեջ վրանում հավաքված բազմությունը ասացի այն, ինչ ինձ ասվել էր:

Հետո եկավ 1966 թվականի ապրիլի 11-ը, երբ Բրանհամ եղբոր երկրային մարմինը դրվեց գերեզման: Ինձ համար դա այնպիսի վշտի օր էր, որը դեռ երկրորդ անգամ չեմ ապրել: Ես չէի կարողանում երգել «Միայն հավատա...» երգը ներկա եղողների հետ, որոնք դա կրկնում էին մոտ մեկ ժամ շարունակ, որովհետև ես ներքուստ ավելի ծոված էի: Ես լաց էի լինում, աղոթում և անընդհատ հարցնում Տիրոջը. «Ասա ինձ, Հարս-Եկեղեցին ինչպե՞ս է հասնելու կատարելության առանց այդ ծառայության, որ դու տվել ես»: Ինձ թվում էր, որ աշխարհը շուռ է եկել:

Նույն օրվա երեկոյան, երբ ես հյուրանոցի իմ համարում էի և ուժասպառ էի եղել, հանկարծ զգացի, որ մի ծանր բեռ վերցվեց ինձանից: Խորը վիշտը անհետացավ, և մի աննկարագրելի ուրախություն, Աստծո խաղաղությունը ինձ լցրեց այնպես, որ ես կարող էի դա զգալ, և մի ձայն ասաց իմ սրտում. «Այժմ քո ժամանակն է բաժանելու կերակուրը»: Աստված հոգ էր տարել ամեն բանի համար: Նա է որոշում որևէ ծառայության սկիզբը, շարունակությունը և ավարտը և (այլ կերպ ինչպե՞ս կարող է լինել) հաջորդ ծառայության սկիզբն ու շարունակությունը: Ինչքան, որ անհասկանալի էր Հովհաննես Սկրտչի մահը այն ժամանակվա հավատացյալների համար, նույնքան անհասկանալի էր Բրանհամ եղբոր հանկարծակի մահը շատ հավատացյալների համար: Մինչդեռ երկուսն էլ կատարել էին իրենց վստահված գործը՝ մեկը Քրիստոսի առաջին գալստյան ժամանակ, մյուսը՝ այսօրվա համար տրված աստվածային պատգամով ուղարկված էր Քրիստոսի երկրորդ գալստից առաջ:

Հաջորդ օրը ես հավաքեցի եղբայրներին, և նրանց հետ պայմանավորվեցի, որպեսզի Բրանհամ եղբոր քարոզները, որոնք մինչ այդ ձայներիզների վրա էին, հրատարակվեին: Ուրի Բորդըրս եղբայրն ասաց, որ պատրաստ է ստանձնել այդ պատասխանատվությունը: Պետրոսի համար էլ հասարակ բան չէր վճռական ժամին ասել. «Եղբայրներ՛ր, դուք գիտեք, որ առաջին օրերից ձեր միջից Աստված ընտրեց, որ իմ բերանով հեթանոսներն Ավետարանի խոսքը լսեն և հավատան» (Գործք 15:7): Հակոբոսը հաստատեց Պետրոսի ասածները, բայց նաև արեց այս կարևոր հայտարարությունը. «Շնամվոնը պատմեց, թե Աստված ինչպես նախ այցի եկավ, որ հեթանոսներից Իր անվան համար ժողովուրդ ձևավորի: Սրա հետ միաբանվում են մարգարեների խոսքերը, ինչպես գրված է» (հհ.14,15):

Ինչպես Աստված նախասահմանել էր, ես առանձնաշնորհում ունեցա հենց սկզբից այդ մաքուր Պատգամը աշխարհով մեկ տանելու: Մի կողմից քարոզվում է Աստծո ճշմարիտ խոսքը, մյուս կողմից բաժանվում է հոգևոր կերակուրը՝ մեր ժամանակների համար խոստացված և բացահայտված խոսքը:

Բրանհամ եղբոր կենդանության ժամանակ ես կապված եմ եղել նրա հետ: Միացյալ Նահանգների եղբայրները դեռևս ոտք չէին դրել եվրոպական հողի վրա: Այդպես Աստված առաջնորդեց, որ երեք լեզուների իմ իմացությամբ միջնորդ դառնամ բոլորի համար, բոլոր երկրներում: Երկրի վրա չկա մի մայրցամաք, որտեղ ես պատգամը տարած չլինեմ: Աստված Ինքը բացել է դռները և սրտերը: Արդեն 1963 թվականին ես քարոզում էի մեր երկրի տարբեր քաղաքներում: 1964 թվականին ես առաջին ճամփորդություններն անցկացրի Անգլիայում, հետո Հնդկաստանում, Հորդանանում և Իսրայելում: 1965 թվականին ես ծառայությունն շարունակեցի Արևմտյան Եվրոպայում: 1966 թվականին ես կարողացա հավաքություններ կազմակերպել Բելգիայում, Հոլանդիայում, Գերմանիայում, Շվեյցարիայում և Ավստրիայում:

Հաջորդ տասը տարիների ընթացքում ես ճամփորդեցի 86 երկրներում և տասը տարի անց ես արդեն այցելել էի արդեն 120 երկրներ: Ողջ աշխարհում նախ եղբայրներին տվեցի Ջեֆերսոնյան հասցեն, որպեսզի ստանան Բրանհամ եղբոր քարոզները անգլերեն լեզվով: Յոթանասունական

թվականներից սկսած Տերը հոգ տարավ, որ Դոն Բաբլիցը մի փոքրիկ խմբի հետ ուղարկի Բրանհամ եղբոր քարոզները աշխարհով մեկ՝ Կանադայի էդմոնտոնից սկսած: Այդ Դոն Բաբլից եղբայրն է, որ բնակվում է Կանադայի Ուայթհորսում, որը մի օր շաբաթ կեսօրից հետո յոթանասունական թվականների կեսերին գրուցեց ինձ հետ: Ցնցված այն փաստով, որ բոլոր երկրների եղբայրները պատվիրում էին Բրանհամ եղբոր քարոզները իմ կատարած ծամփորդությունների շնորհիվ՝ եղբայր Բաբլիցը հանկարծ ասաց. «Ֆրանկ եղբայր, մենք գտնում ենք Բրանհամ եղբոր ծառայությունը Աստվածաշնչում, իսկ ի՞նչ կասես երկրով մեկ կատարվող քո ծառայության մասին: Յնարավո՞ր է, որ դա լինի Աստվածաշնչում»: Ես վախենում էի ֆանատիզմից և մերժման նշան արեցի՝ ասելով. «Խնդրում եմ, վերջացրու: Ինչպե՞ս կարող է իմ ծառայությունը գտնվել Աստվածաշնչում: Դա չի կարող լինել»: Մենք ավարտեցինք մեր զրույցը՝ ողջ աշխարհում կատարվող գործը հանձնելով Աստծո շնորհքին:

Եվ նորից անսպասելի կատարվեց. արևը փայլում էր սենյակում, և ես շրջվեցի դեպի աջ՝ պահարանիկից Աստվածաշունչը վերցնելու, երբ Տերը դիմեց ինձ այս խոսքերով. «Իմ ծառա, ըստ Մատթ.24:45,47 համարների, ես քեզ նշանակել եմ բաժանելու կերակուրը»: Սուրբգրային այս համարի վերաբերյալ ես մինչ այդ երբեք չէի քարոզել, ես չգիտեի, որ Տերն այդպիսի խոսքեր է ասել, առավել ևս չէի կարող իմանալ, որ դա սահմանված էր ինձ համար: Առաջին անգամ ես կարդացի այդ և իմացա, որ «հավատարիմ և խելացի ծառան» Տիրոջ կողմից դրված է «իր տան բոլոր ծառաների» վրա, որ նրանց կերակուր տա ժամանակին: Իսկ հիմա այդ նույն խոսքն ինձ ասել էր Տերը: Իսկ թե ինչ է դա նշանակում, Պողոսն այդ մասին գրել է 2 Կորնթ. 9:10 համարում, ինչպես նաև իր համագործակից Տիմոթեոսին. «Եթե այս բաները եղբայրներին խրատ տաս, Քրիստոս Յիսուսի բարի ծառայող կլինես՝ սնված հավատի խոսքերով ու այն բարի վարդապետությամբ, որին հետևեցիր» (1 Տիմ.4:6):

Պետք է կարդալ նախորդ հինգ համարները, ուր նկարագրված է վերջին օրերի աղետալի վիճակը, հավատքի կատարյալ ուրացությունը դևերի և մոլորեցնող ոգիների վարդապետությամբ՝ հասկանալու համար այս խոսքերի կշիռը և մաքուր վարդապետության կարևորությունը, որը մեր հավատքի միակ կանոնն է: Ժամանակը մոտ է, և Սուրբ Գրքի այս խոսքերը կատարվում են երկու ուղրտներում էլ: Այս ծառայությունը առաջին հերթին սահմանված է ծառայության մեջ եղող բոլոր եղբայրների համար, որպեսզի նրանք նույնպես կարողանան հրապարակել Աստծո բացահայտված խոսքը ըստ աստվածաշնչային կարգուկանոնի և Աստծո ժողովրդին ուսելիք մատուցեն Տիրոջ սեղանի վրա: Մեկ բան է գոյությունը պահպանելու համար անհրաժեշտ կերակրի պաշար հավաքել, ուրիշ բան է պատրաստի կերակուր մատուցել՝ հագեցնելու համար հոգևոր սովը պահված մանանայով: Աստված ասել է. «Ահա օրեր են գալիս,--- ասում է Տեր Եհովան,--- որ սով պիտի ուղարկեմ երկրի վրա, ոչ թե հացի սով և ոչ ջրի ծարավ, այլ Տիրոջ Խոսքը լսելու» (Ամոս 8:11):

Բոլորովին պատահական չէ, որ Մատթ.25:6 համարում գրված կեսգիշերային աղաղակը՝ «Ահա փեսան գալիս է, դուրս եկեք՝ նրան դիմավորելու» անմիջապես հաջորդում է հավատարիմ և խելացի ծառայի

ծառայությանը: Այս վերջին պատգամն անմիջապես ուղղված է իմաստուն կույսերին: Միայն նա, ով պատկանում է Հարս-Եկեղեցուն, կլսի այն, ինչ Փեսան իրեն ասում է Իր Խոսքով, որովհետև մենք այդ Խոսքով ենք ապրում: Կույսերի պատրաստ լինելը կապված է միայն Աստծո հաստատած ծառայության հետ: Այսօր ես պետք է ասեմ այն, ինչ գրված է 2 Կորնթ.11: 2 համարում. «Որովհետև ձեզ համար նախանձախնդիր եմ Աստծո նախանձախնդրությամբ, քանի որ ձեզ մի մարդու հետ նշանեցի, որպեսզի մի սուրբ կույսի կանգնեցնեմ Քրիստոսի առաջ» (2 Կորնթ.11:2):

Այն ծառայությունը, որն ինքն է հաստատել, իր մեջ երկու բան է պարունակում՝ Աստծո հավիտենական Խոսքի ազդարարումը և հոգևոր կերակուրի բաժանումը, որն ի վերջո կհանգեցնի Հարս-Եկեղեցու կատարելությանը: Ես Բրանհամ եղբոր կամ Պողոս առաքյալի միակողմանի ձայնաշեփորը չեմ: Ես Աստծո տված կոչման և լիազորության շնորհիվ կարող եմ լինել միայն Աստծո ձայնաշեփորը և ազդարարել Նրա ողջ խորհուրդը և այն ամենը, ինչ պարունակում է հավիտենապես ճշմարիտ Ավետարանը, որպեսզի այն քարոզեմ այնպես, ինչպես քարոզել եմ Պողոսը և Բրանհամ եղբայրը: Երբեք ոչ ոք ինձ չի տեսնի աղաղակելուց. «Մարգարեն ասաց, մարգարեն ասաց»: Ինձ Պողոսը չի կանչել, ոչ էլ Բրանհամ եղբայրը, այլ հարուցյալ Տերը՝ Հիսուս Քրիստոսը, որը նրանց էլ է կանչել: Մինչև վերջ իմ բերանից դուրս կգա միայն Աստծո անփոփոխ Խոսքը, բայց ոչ տարբեր մեկնություններ, որոնք զազրելի են ինձ համար, որովհետև ԱՅՄԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ. «Իմ Հոգին, որ քեզ վրա է, և Իմ Խոսքերը, որ դրել եմ քո բերանում, պիտի չպակասեն քո բերանից...» (Ես. 59:21):

Աստծո ոչ մի ծառա որոշումներ կայացնելու մեջ մասնակցության իրավունք չունի: Ոչ ոքի չեն հարցրել, թե Նա ուզում է Տիրոջը ծառայել: Աստված Ինքը գերիշխան կերպով գործում է Իր Թագավորությունում և Եկեղեցում: Բոլորիս հայտնի է, որ Պողոս առաքյալին Եկեղեցու համար առանձնահատուկ ծառայություն տրվեց: Սուրբ Գրքում երեք անգամ է հիշատակվում նրա կոչման մասին Գործք առաքելոց 9, 22 և 26 գլուխներում: Նա նույնիսկ օգտագործեց Ես. 42:6 և 49:6 համարներում գրված խոստումները, որոնք վերաբերում էին մեր Տիրոջը և վերագրեց իր ծառայությանը (Գործք 13-րդ գլուխ): Ինչու՞: Որովհետև այս հատվածում կրկնակի խոստում է տրված՝ մեկ անգամ վկայակոչում է Փրկչին, որ Իսրայելի ցեղերը վերականգնվելու են, և դրա համար է Տերը պատվիրում Մատթ.10:5 համարում. «Հեթանոսների ճանապարհով չգնաք...» (Մատթ.10:5): Բայց երբ ժամանակը եկավ, և հեթանոսների վերաբերյալ խոստման երկրորդ մասը պետք է կատարվեր, կարդում ենք. «Որովհետև Տերը մեզ այսպես է պատվիրել. «Քեզ հեթանոսների համար լույս դրեցի, որպեսզի դու մինչև երկրի ծայրերը փրկություն լինես» (Գործք 13:47): Մի նոր ժամանակաշրջան սկսվեց, բայց սկզբում որպես անցումային շրջան: Եկեղեցում աստվածաշնչային կարգ կա, որով հաստատված են եկեղեցու շինության համար նշանակված ծառայությունները, և կա փրկության կարգ, որում կատարվում է այն, ինչ պատկանում է փրկության ծրագրին:

Հովհաննես Մկրտիչը գիտեր, թե որ խոսքը իրականացավ իր ծառայությամբ: Նրան հարցրին, թե արդյոք ինքն է Քրիստոսը, մարգարեն

կամ եղիան: Երեք անգամ էլ նա ասաց՝ «Ոչ»: Այնուհետև ուղարկված մարդիկ ուզում էին իմանալ, թե իրականում ով է ինքը, և նա պատասխանեց Յովհ.1:23 համարում. «Ես անապատում կանչողի ծայնն եմ...»: Պողոսը նույնպես հայտնություն ստացավ, թե սուրբգրային որ հատվածներն իրականացան իր ժամանակ: Նույն կերպ Բրանհամ եղբայրը հստակ գիտեք, թե սուրբգրային որ համարներն են վերաբերում իր ծառայությանը՝ նա այդ մասին հաճախ վկայել է իր քարոզներում: Հենց դրա վրա գաթակղվեցին բոլոր ավետարանիչները, որոնք ներշնչվել էին իր ծառայությամբ: Ես այդ մասին գիտեմ անմիջականորեն, քանի որ ես անձամբ ճանաչել եմ նրանցից շատերին, Նրանք Աստծո կողմից ուղարկված մարդուն գնահատում էին որպես բժշկության պարզ և Յոզու առանձնահատուկ պարզներ ունեցող ավետարանիչի: Նրանք նույնիսկ վկայել են, որ առաքյալների ժամանակներից ի վեր այդպիսի ծառայություն չի եղել երկրի վրա: Բայց երբ խոսքը հասավ այս խոստումի իրագործմանը՝ «Ահա ես կուղարկեմ ձեզ համար եղիա մարգարեն, Տիրոջ մեծ և ահեղ օրը գալուց առաջ...» (Մաղաք. 4:5,6, Մատթ. 17:11, Մարկ. 9:11), նրանք հակառակվեցին դրան: Նրանք խստացրին իրենց սիրտը, և պատրաստ չեղան խոնարհվելու Աստծո հզոր ձեռքի տակ, Որը կատարում էր Իր տված խոստումները, որոնք փրկության ծրագրի մաս են կազմում: Նրանք պատրաստ չէին հեռանալու իրենց ավանդական վարդապետություններից և գաղափարներից, ոչ էլ պատրաստ էին խրատ ընդունելու: Ուրեմն իրենց ոչինչ չէր մնում անելու, քան հայտարարել, որ Բրանհամ եղբայրը ճիշտ դիրքում էր իր ծառայության սկզբում, բայց ոչ վերջում:

Այժմ հոգիները բաժանվում են այն անձնավորության պատճառով, որին հաստատել է Աստված, և նույն բանը կրկնվում է: Նորից և անընդհատ լսում ենք այս խոսքերը. «Սկզբում նա կոչում և ծառայություն ուներ, բայց հետո...»: Ինչպես որ աշխարհը առանց Բրանհամ եղբոր ծառայության, երեք չէր լսի ավետարանիչների մասին, այնպես էլ պատգամի շրջաններում ոչ ոք չէր լսի հյուսիսային Ամերիկայի եղբայրների մասին: Նորից գաթակղվում են, երբ ինչ-որ մեկը սուրբգրային հատված է վկայակոչում իր ծառայության վերաբերյալ: Սրա վերաբերյալ պետք է ասել. եթե ծառայությունը հիմնված չէ Սուրբ Գրքի վրա, ընդհանրապես իրավունք չունի գոյություն ունենալու: Մյուսներն առարկում են՝ թե նա ուղղում է մարգարեի ասածները: Նրանք չեն հասկանում, որ երբ թվում է, որ հակասություն կա, ճշմարիտ է միայն այն, ինչ գրված է Աստվածաշնչում և հիմնված է անենաքիչը երկու-երեք հատվածների վրա:

Այն խոստումը, որ Աստված շնորհքի ժամանակի վերջում մարգարե է ուղարկելու, ամեն բան է նշանակում ընտրյալների համար: Մինչդեռ հիմա երեք բան է կատարվում՝ հարանվանությունների «դպիրները» նրան մերժում են, Պատգամի ուսայլները նրան կրոնի հիմնադիր են դարձնում, միայն ընտրյալներն են վերադառնում հայրերի հավատքին՝ առաքյալների վարդապետությամբ, ինչպես եղել է սկզբում: Այս վճռական ժամանակաշրջանում կարևորը մարգարեական խոսքն է, որը չպետք է մեկնաբանվի, այլ դիտվի իր իրագործման մեջ (2 Պետր.1:15-21): Դուք՝ բոլոր ժողովուրդներ, լսեք այս. նկատի ունենալով Եկեղեցու կատարելության ժամանակը, այսօր վարդապետության ծառայությունը

նույնքան կարևոր է, որքան սկզբում (Գործք 13:1, 1 Կորնթ.12:28), որպեսզի բոլորս հասնենք հավատքի միությանը (Եփես.4:1-16), և այլևս չտարուբերվենք վարդապետության տարբեր քամիներից:

Եթե ճիշտ է, որ Աստծո բնօրինակ պատգամը, ինչպես եղել է սկզբում, նախորդելու է Հիսուս Քրիստոսի վերադարձին, որ դուրս գալու կոչ անի և սովորեցնի Հարսին, ուրեմն իմաստուն կույսերը կլսեն, թե Հոգին ինչ է ասում եկեղեցիներին: Նրանք են, որ Սուրբ Հոգով կմկրտվեն՝ դառնալու մեկ Մարմին և կազմելու ճշմարիտ եկեղեցին: Սա այն եկեղեցին է, որին Փրկիչն Ինքը կներկայացնի Իր առջև անբիծ և անարատ (Եփես. 5:26-30): Նաև հաստատ է այն, որ հիմար կույսերը կշրջանցեն այդ և կհետևեն մարգարեին վկայակոչող առաջնորդներին, որոնք «հատուկ հայտնություններ» են տարածում և բաժանումներ են թողնում իրենցից հետո: Բոլոր կույսերը՝ թե՛ հիմարները, թե՛ իմաստունները, համոզված են, որ լսել են կանչը և ճանապարհ են ընկել Փեսային դիմավորելու: Ոմանք նույնիսկ ասում են, որ Նա արդեն եկել է, մյուսներն ասում են, որ կնիքները բացվելուց հետո դանդաղ իջնում է, և այլն: Բավարար չէ և չի էլ լինի անընդհատ մեջբերել մարգարեի ասածները, երբ Սուրբ Գիրքը անտեսված է որպես վերջնական հեղինակություն: Ինչպես, որ կրոնավորները այլ կերպ են մեկնում Աստվածաշունչը իրենց անձերի կորստյան համար (2 Պետր. 3:16), նույնը կատարվում է Բրանհամ եղբոր ասածների հետ: Ճշմարիտ հավատացյալների համար ժամն է պատրաստվելու հավատքի հնազանդությամբ և Հարսի ու Փեսայի միությամբ, աստվածային սիրով և վարդապետությամբ և հավատքով:

Անհերքելի է, որ Բրանհամ եղբոր ծառայությամբ Աստծո ողջ ծրագիրը և բոլոր խորհուրդները ազդարարվել են: Սուրբ Հոգին մեզ առաջնորդում է բացահայտված խոսքի ողջ ճշմարտության մեջ: Այժմ շնորհքի ժամանակի վերջում, փրկության օրվա վերջում, քանի դեռ չի հայտնվել Տիրոջ օրը, որում արևը կխավարի և լուսինը արյուն կդառնա, Նա ուղարկել է մի մարգարեական, մաս վարդապետական Պատգամ, որի նպատակը եկեղեցու կատարելությունն է: Կատարյալ վերականգնումը մաս է կազմում այն հիմնական խոստման, որն Աստված տվել է եկեղեցուն: Մինչև Փեսան գա Հարսին տուն տանելու, պետք է Հարսը դուրս կանչվի և պատրաստվի: Որովհետև այսպես է գրված մեր Տեր Հիսուս Քրիստոսի մասին. «... որին երկինքը պետք է ընդունի, մինչև այն ամեն բաների հաստատման ժամանակները, որոնց մասին Աստված խոսեց իր սուրբ մարգարեների բերանով սկզբից ի վեր» (Գործք 3:21):

Այն, որ հավիտենապես հավատարիմ Աստվածը ինձ դարձրել է Իր ծառաներից մեկը, Իր որոշումն է: Նորից ու նորից Նա ինձ հետ խոսել է լսելի ձայնով, և այդ ձայնը միշտ գալիս էր վերևից և աջ կողմից: Միայն մեկ անգամ, այսինքն՝ 1979 թվականի հունիսի 16-ին, ես լսեցի Աստծո բարկացած ձայնը, ինչպես անտանելի որոտի ձայն, որը ուղղահայաց կերպով իջնում էր իմ աջ կողմում, ավելի ու ավելի ուժեղացող որոտի ձայնով և կանգնեց ուղիղ ինձ վրա: Հետո հնչեց ինը բառ՝ դրանցից յուրաքանչյուրը որոտի ձայնի պես էր և հստակ արտաբերում էր յուրաքանչյուր բառը (Դանիա, Ֆանյո):

Սրա վերաբերյալ ես կուզեի համառոտ պատմել այն իրադարձությունների մասին, որոնք ինձ համար, ուրիշների համար և եկեղեցու համար կարևոր են եղել և հիմա էլ կարևոր են: Ես գիտեմ, որ միայն նրանք, ովքեր Աստծո հետ անձնական հաղորդակցություն են ունեցել, սրանով կամրապնդվեն հավատքի մեջ: Նրանք, ովքեր Աստծո հաստատած ծառայության հետ կապ չեն ունեցել, կզայթակղվեն իմ վկայությունից: Գուցե մտածեն՝ «Ինչ է երևակայում իր մասին»: Մյուսներն էլ կընդունեն, որ ոչ ոք չի կարող որևէ բան ստանալ, եթե Աստծուց տրված չլինի: Պողոսն, օրինակ, պատմում է, որ ինքը հափշտակվել է մինչև երրորդ երկինք՝ դրախտ (2 Կորնթ.12-րդ գլուխ): Բայց նա դա ասում է Աստծո փառքի համար: Չնայած ամեն ինչին իր ծառայության պատճառով ստիպված եղավ շատ բաներ տանել, ինչպես նա պատմում է 2 Կորնթ.11-րդ գլխում: Տիրոջ համար ծառայությունը իր հետ շատ բաներ է բերում՝ թշնամություն, հալածանքներ, տառապանքներ, բայց նաև հրաշալի փորձառություններ և օրհնություններ: Մարգարեներն ու արդարները չեն հալածվել և սպանվել հանցագործ լինելու համար, այլ խոսքը կրելու: Չնայած ամեն ինչին՝ ես կարող եմ ասել. «Եվ շնորհակալ եմ ինձ զորացնող մեր Տեր Հիսուս Քրիստոսին, որ ինձ հավատարիմ համարեց և սպասավորության մեջ դրեց» (1 Տիմ.1:12):

Ես սկսում եմ իմ վկայությունը իմ կոչումով: Այդպես է եղել Աբրահամի, Մովսեսի, Պողոսի, Բրանհամի հետ:

- Վերջին երկու բաները, որոնք Տերն ինձ ասաց այն օրը, սրանք էին. «Իմ ծառա, մի՛ հիմնիր որևէ տեղական եկեղեցի և մի՛ հրատարակիր երգարան...» (Կրեֆելդ): Ես համոզված եմ, որ տեղական եկեղեցիները Աստվածաշնչի համաձայն են, բայց իմ առաջադրանքը տարբեր քաղաքներում և երկրներում եկեղեցիներ հիմնելը չէ: Մեզ մոտ՝ Կրեֆելդում նույնպես, ինչպես բոլոր եկեղեցիներում ընդունված է երգարանով երգել, բայց ես չպետք է սեփական երգարան հրատարակեմ: Տերն ասաց, որ դա հարանվանության նշանն է: Չէ՞ որ բոլոր եկեղեցիները ունեն իրենց սեփական երգարանները, հիմա այդպես է նաև Պատգամի առանձին խմբերում:
- «Իմ ծառա, վեր կաց և կարդա 2 Տիմ. 4-րդ գլուխը, որովհետև ես ուզում եմ խոսել քեզ հետ» (Մարսել): Նախորդ երեկոյան ինձ հարցրել էին Հայտնության 10-րդ գլխի յոթ որոտների մասին: Ես չկարողացա պատասխանել այդ հարցին: Հաջորդ առավոտյան Տերն ինքը ինձ պատասխան տվեց Սուրբ Գրքի միջոցով. «Խոսքը քարոզի շարունակ՝ ժամանակին լինի, թե ժամանակից դուրս, հանդիմանիր, սաստիր, հորդորիր ամենայն համբերատարությամբ և վարդապետությամբ» (2 Տիմ.4:2): Հետո ես Աստվածաշունչը դրեցի սեղանին, ձեռքերս բարձրացրի և ասացի. «Սիրելի՛ Տեր, որքան, որ հաստատ է, որ Դու ինձ պատվիրեցիր կարդալ այս համարը, նույնքան հաստատ է, որ յոթ որոտների ասածը չի գրվել որպես Աստծո խոսք: Ահա թե ինչու չի կարող քարոզվել»: Սա է ԱՅՄՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ: Եշտարիտ սպասավորները Տիրոջից պատվեր են ստացել կարդալ և պահել միայն «դրա մեջ գրվածները» (Հայտն. 1:1-3): Այն ամենը, ինչ հրապարակվում է «յոթ որոտների վարդապետություն» հասկացությամբ, միայն կեղծ վարդապետություններ են, որոնք տանում են կործանման, եթե նույնիսկ

մեջբերումներ են օգտագործվում դրանք ներկայացնելու համար: Դրանք ենթադրություններ են, ոչ թե հայտնություններ: Ոչ ոք իրավունք չունի ինչ-որ բան ավելացնելու Աստծո խոսքի լիովին ավարտված վկայությանը (Հայտն. 22:18-21): Նա, ով այնուամենայնիվ անուն է այդ, նա հեռացնում է ինքն իրեն:

- «Իմ ծառա, երբ վերջին գործողությունը կսկսվի, ես նորից կխոսեմ քեզ հետ, և Իմ Հոգին կտրեմք քո մեջ...» (Կրեֆելդ): Միաժամանակ հիշատակվեց Ցյուրիխ քաղաքը: Ես հաստատապես համոզված եմ, որ Աստված վերջում մի կարճ և զորավոր գործ կանի, որին մենք կմասնակցենք. «Որովհետև Տերն արդարությամբ մի կարճ ու համառոտ բան կանի. Տերը երկրի վրա մի վճռական բան կանի» (Հռոմ. 9:28):
- Ցորենի արտի և կոմբայնի տեսիլքը բացառիկ էր: Սրա վերաբերյալ շատ բանբասանքներ են ասվել և դեռևս ասվում են: Համբուրգում ապրող մի եղբայր շատ տարիներ առաջ նույնիսկ գրքույկ է գրել դրա վերաբերյալ հետևյալ վերնագրով՝ «Կոմբայնի գործերը»: Այնտեղ ինձ նկարագրում են որպես հակաքրիստոս և շատ ծաղրում: Աստծո առաջ ես կրկնում եմ միայն այն, ինչ տեսել և լսել եմ. հոգով ես տեղափոխվեցի շատ հասուն ցորենի մի արտ և տեսա, թե ինչպես լեցուն հասկերը, որոնք արդեն խանձվել էին արևի տակ, միանման թեքվել էին: Ես գիտեմ, որ շնորհքի ողջ ժամանակաշրջանում խոսքը ցանկվել է որպես սերմ, և Եկեղեցու ամեն շրջանում հոգիների հունձ արդեն եղել է: Մինչդեռ Սուրբ Գիրքը խոսում է նաև այն հունձի մասին, որը լինելու է վերջում (Մատթ.3:12 և այլ համարներ): Հայտն.14:12 համարում ասվում է. «... քանի որ երկրի հունձը հասել է» (Հայտն.14:15): Ես նկատեցի, որ ոչ մի տատասկ չկար արտի մակերեսին, և հոգով գիտեի, որ որոնք արդեն հանված է, ինչպես գրված է. «Նախ որոնները քաղեցեք ու դրանք խուրձ-խուրձ կապեցեք՝ այրելու...» (Մատթ.13:30): Հետո նայեցի ձախ և տեսա մի բոլորովին նոր կոմբայն: Այդ պահին Տերը խոսեց զորավոր ձայնով. «Իմ ծառա, այս կոմբայնը նախատեսված է քեզ համար, որովհետև դու պետք է հավաքես հունձը: Դա դեռ ոչ ոք չի օգտագործել...»: Ես անմիջապես առաջ եկա և բարձրացա կոմբայնը: Բայց ամեն ինչ մթնեց, կարծես պատերազմ լիներ ամպերի մեջ: Ես ասացի. «Հավատարիմ Տեր, արդեն չափազանց ուշ է: Ես չեմ կարող հունձը հավաքել: Դատաստանները հիմա կթափվեն երկրի վրա»: Հաջորդ պահին ամպերի մեջ եղած բացվածքից արևը հայտնվեց ողջ ուժով և փայլեց արտի վրա: Ես անմիջապես բարձրացրի լծակները և սկսեցի հունձը հավաքել: Հազիվ էի վերջացրել, երբ երկինքը նորից մթնեց, և ես միայն կայծակի և որոտի ձայն լսեցի:
- «Իմ ծառա, հրաժարվիր Հնդկաստան մեկնելուց» (Կրեֆելդ): Ես արդեն տուրիստական բյուրոյից վերցրել էի իմ տոմսը և պետք է մեկնեի ուրբաթ օրը: Բոմբեյից Մադրաս թռչող ինքնաթիռը, որում ես գրանցված էի, պայթեց թռիչքի ժամանակ, ընկավ և բոլոր 96 ուղևորները զոհվեցին:
- «Իմ ծառա, ըստ Մատթ.24:45-47 համարների ես քեզ նշանակել եմ, որ կերակուր բաժանես ճիշտ ժամանակին» (Էդմոնտոն, Կանադա): Սա ինձ

համար Տիրոջ կողմից ասված պատասխանն էր, որը հսկում է իր խոսքի վրա, որ կատարվի:

- «Իմ ծառա, երբ սահմանները բացվեն, ես կկանչեմ Հարսիմ Արևելյան Եվրոպայից ...» (Կրեֆելդ): Տեսիլքում ես գտնվում էի հանդիսությունների մի մեծ դահլիճի բեմում: Մարդիկ մտնում էին գլխավոր մուտքով և նստում: Մինչդեռ ես նկատեցի, որ ամենուրեք ազատ նստարաններ կային: Մի պահ հետո Տիրոջ ձայնը հնչեց ջահի աջ կողմից, որի տակ ես կանգնած էի. «Երբ դա կատարվի, Իմ զալուստը շատ, շատ մոտ կլինի»: Հետո իմ ձախ կողմում տեսա, որ պահեստային դուռը բացվեց, և արևելքի երկրներից եկող տարբեր խմբերը հերթով մտան: Յուրաքանչյուր խմբի առաջնորդող եղբայրները ինձ ողջունում էին բեմի վրա և բոլորի հետ մտնում դահլիճ: Վերջին խումբը մտնելուց հետո նայեցի դահլիճին և տեսա, որ բոլոր տեղերը զբաղեցրած են: Ես այս փորձառությունն ունեցա Բեռլինի պատը ընկնելուց և արևելքի սահմանները բացվելուց 13 տարի առաջ: Այն ժամանակ ոչ ոք չէր մտածում, որ արևելյան բլուրը կփլուզվի և Գերմանիայի և Եվրոպայի վերամիավորումը տեղի կունենա:
- «Իմ ծառա, զնա հարևան հողամասը և հանձնիր այն ինձ» (Կրեֆելդ): Հարևան հողամասը, որը երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ռազմագերիների ճամբար է եղել, դեռևս ցանկապատված էր 2,30 մետր բարձրությամբ ցանկապատով և փշալարերով: Ես հողամաս գնացի առևտրական կենտրոն տանող նեղ դռնով, ծունկի եկա մացառուտի մեջ և այդ տարածքը հանձնեցի երկնքի Աստծուն՝ երկրի վրա գտնվող իր եկեղեցու համար:
- «Իմ ծառա, զնա Ռ. Տ.-ի մոտ, վերցրու քեզ հետ երեցներին և կարդա նրա համար Եզեկիային ուղղված Եսայի մարգարեի խոսքերը: Ես կառողջանա» (Կրեֆելդ): Հավաքությանց հետո ես տան ճանապարհին էի և հասել էի բալեճուն, որը այն ժամանակ հողամասի ծայրին էր, երբ Տերը ինձ հետ խոսեց: Մենք արեցինք այն, ինչ Տերը պատվիրել էր, և ես հաստատեց իր խոսքը:
- «Իմ ծառա, զնա՛ այնտեղ, ասա՛ խոսքը, որովհետև այդ հավատացյալ կինը չպետք է ամոթահար լինի իր անհավատ ամուսնու մոտ» (Կրեֆելդ): Մի թանկագին քույրիկ հավաքության էր եկել բուրոսով ընդ մեքենայով, որը դեռ հազար կիլոմետր էլ չէր անցել, բայց հավաքությանց հետո մեքենան գործի չէր ընկնում, նույնիսկ այն բանից հետո, երբ մեր եղբայրները և նույնիսկ ճանապարհային ծառայության մասնագետները ջանացին գործի օգել այն: Ես հենց այդ ժամանակ առաջանում էի դեպի աղոթքի դահլիճը, և Տիրոջ ձայնը հնչեց. «Իմ ծառա, զնա այնտեղ և ասա խոսքը»: Ոչ ոք չի կարող պատկերացնել, թե ինչ վստահություն, ինչ համոզվածություն է բերում Տիրոջ բերանից դուրս եկած խոսքը: Ես դուրս եկա, հանդիպեցի այն քրոջը և եղբայրներին, որոնք դեռ այնտեղ էին, և ասացի. «Գնա՛ և գործի դիր մեքենան, որովհետև այսպես է ասել Տերը»: Քույրն առարկեց. «Բայց ամեն ինչ փորձեցինք...»: Ես նրան ընդհատեցի. «Մի՛ խոսիր, զնա՛ և արա՛ այն, ինչ քեզ ասվեց Տիրոջ անունով»: Ասվածը կատարվեց: Մեքենան գործի ընկավ հենց առաջին

փորձից և քույրը առանց պատահարի տուն հասավ: Հաջորդ առավոտյան մեքենան ոչ մի ձայն չէր արձակում և այն բուքսիրով հասցրին վերանորոգման արհեստանոց: Այնտեղ պարզեցին, որ բենզապոմպը լիովին շարքից դուրս է եկել, և պետք է նորը տեղադրել: Միայն այն ժամանակ, երբ Տերը խոսել է, Աստծո սպասավորը կարող է իրականացնել ասված խոսքի ծառայությունը:

- 1978 թվականի նոյեմբերի 18-ին ժամը տասին մոտ միսիոներական կենտրոնի գրասենյակում Տերն ինձ ասաց. «Իմ ծառա, քննիր Գործք առաքելոց գիրքը և տես, թե երբևէ որևէ տղամարդ իր կնոջ հետ միասին կանչվել է ծառայության»: Ես շրջվեցի աջ, վերցրի Աստվածաշունչը, կարդացի Գործք առաքելոց գիրքը և պարզեցի, որ նույնիսկ Գործք առաքելոց գրքի վեցերորդ գլխի յոթ սարկավազները, որոնք հոգ էին տանում աղքատների համար, ծառայության չէին կանչվել իրենց կանանց հետ: Դրանով 1976 թվականի մայիսին Բրեմենում եղած մի սուտ մարգարեություն քողագերծվեց հենց Աստծո կողմից, ով ինձ պատվիրեց քննել Գործք առաքելոց գիրքը: Ես պարտավոր եմ միշտ վերցնել առաքյալների ժամանակվա սկզբնական օրինակը:
- Ես դուրս եկա իմ մարմնից և հափշտակություն ապրեցի: Ես տեսա թե ինչպես էր իջնում սուրբ քաղաքը (Կրեֆելդի հիվանդանոց):

1980 թվականի դեկտեմբերին ես միսիոներական ճամփորդությամբ Աֆրիկայում էի: Գանայի Ակկրա քաղաքում մի գիշերվա մեջ մոժակը չորս անգամ ինձ խայթեց: Երբ Սուրբ Ծննդից քիչ առաջ վերադարձա տուն, ինձ վատ էի զգում, և հունվարի մեկին ստիպված եղան ինձ շտապ օգնության մեքենայով տանել հիվանդանոց: Այնտեղ հետազոտություն կատարեցին և տվեցին ախտորոշումը՝ խորացած տրոպիկական մալարիա:

1981 թվականի հունվարի երեքին ես լսեցի, թե ինչպես պրոֆեսորը՝ դոկտոր Բեքերը ասում էր իր բժշկական անձնակազմին. «Արդեն չափազանց ուշ է: Այստեղ ոչինչ չի օգնի՝ ոչ մի դեղ, ոչ մի արյան ներարկում»: Ես կարողանում էի միայն լսել, բայց չափազանց թույլ էի խոսելու համար: Այդ ժամերին, երբ բժիշկները հույսը կտրել էին, և ջերմաստիճանի բարձրացումը և թուլության նույնիսկ ավելի էին հաճախանում, իմ եղբայր Աթոլորը մոտեցավ իմ մահճակալին և հստակ ու ուժեղ ձայնով ասաց. «Հիսուս Քրիստոսը միայն Գողգոթայում չէ, որ հաղթել է: Նա հաղթել է նաև այս սենյակում»: Ես զգում էի, որ իմ վերջը եկել է, և միայն մի հարց ունեի. «Իմ Տեր, իմ Փրկի՛չ, ի՞նչ վիճակում եմ կանգնում Քո առջև»:

Այդ պահին դուրս եկա իմ մարմնից և հասա կապույտ երկնքին, տեսա սպիտակ զգեստներ հագած մի անհաշվելի բազմության: Բոլորը երիտասարդության ծաղկուն շրջանում էին (Հոբ 33:25): Եղբայրների մեջ, որոնք առաջին շարքում էին, ես էլ էի: Բոլոր քույրերը երկար մազեր ունեին, որոնք թափվում էին մեջքին: Ուշադրություն էին գրավում մազերի տարբեր գույները: Բոլորս վեհասքանչ ձևով ավելի ու ավելի էինք բարձրանում: Հետո ես նկատեցի հորիզոնական, բաժանող մի գիծ, որը հայտնվում է ամպերի միջից արևածագի ժամանակ: Հոգով ես

գիտեի, որ մենք հանդիպելու ենք Տիրոջը օդերում: Եվ դրա համար ես ավելի բարձր էի նայում, և տեսա, թե ինչպես է իջնում սուրբ քաղաքը: Դա փառավոր էր, հրաշալի: Երջանկության ալիքներ էին անցնում իմ երկնային մարմնով: Ես գիտեի, որ սա հափշտակությունն է: Ես ուզում եմ կանգ առնել այստեղ և միայն ասել, թե ինչ հիասթափություն ունեցա իմ մարմնի մեջ վերադառնալով:

- «Իմ ծառա, հավաքիր Ինձ համար Իմ ժողովրդին, բոլոր նրանց, ովքեր ուխտ են արել Ինձ հետ զոհով...» (Կրեֆելդ): Տերն այդ խոսքերն ինձ ասաց դեկտեմբերի 28-ին: Յետագայում պակաս չգարմացա, երբ տեսա, որ Սուրբ Գրքում երկու հատված կա, որոնք արտահայտում են այդ խոսքերը՝ Սաղմ.50:5 և 2Օրին. 4:10: Բոլոր նրանք, ովքեր հիմա խոստումի գավակներ են, իրենց կողմից հաստատում են Ուխտը Աստծո հետ, որը հաստատվել է մեր մեջ Յիսուս Քրիստոսի միջոցով, զոհով: Նրա ժողովուրդը կհավաքվի այս պատվերի տակ՝ «... և ես Իմ խոսքերը լսել տամ նրանց»:
- Ես դուրս եկա իմ մարմնից և բարձրացա երկինք: Գուցե դա դրախտն էր: Ես տեսա ծիածանի գույներից բաղկացած, ներդաշնակ շարժվող լույսի առատություն: Յոգով գիտեի, որ գահը իմ աջ կողմում է, որովհետև այնտեղից լույսը գալիս էր կրակի պես: Չափս կողմում տղամարդկանց երգչախումբը, նայելով գահին, երգում էր 34 սաղմոսը գերմաներեն լեզվով, Լյութերի թարգմանությամբ (Վառնա, Բուլղարիա): Այս խոսքերից հետո՝ «Տիրոջ հրեշտակը բանակ է շինում Նրանից վախեցողների չորս կողմը և փրկում նրանց», հնչում էր միջերգը՝ «Տիրոջ հրեշտակը այստեղ է հիմա»: «Ճաշակեցեք և տեսեք, որ Տերը քաղցր է. երանելի է այն մարդը, որ հուսացած է Նրան» խոսքերից հետո երգչախումբը երգում էր թրթռուն ձայնով՝ «Տերն այստեղ է հիմա»:

Կարող էի շարունակել և պատմել այն բոլոր հրաշալի փորձառությունները, որոնք ես ունեցել եմ այս տարիների ընթացքում, և դրանցից յուրաքանչյուրի համար կարող եմ վկայակոչել Տիրոջը: Աստծո խոսքն ու խորհուրդը երբեք այսքան հստակ և լիակատար ձևով չեն բացահայտվել, ինչպես մեր ժամանակներում: Իրոք, Աստված հայտնեց Իր առաքյալներին և մարգարեներին այն, ինչ հավիտենից ի վեր սահմանել էր Իրեն պատկանողների համար (Եփես. 3-րդ գլուխ), Նա այդ հայտնեց նաև մեզ:

ԱՍՏԾՈՒ ՅՐԱՅԱՆԳՆԵՐԸ ԱՆՑԱԾՔԱՌԱՍՈՒՆ ՏԱՐԻՆԵՐԻԸՆԹԱ ՑՔՈՒՄ

Իսրայելը քառասուն տարի ճամփորդեց անապատում և հետո հայտնվեց խոստացված երկրի մուտքի մոտ: Խոսքը գտնվում էր Ուխտի տապանակում, բայց վերջնական արդյունքը ամոթալի էր: Ուշադրություն դարձրեք. Պողոսը համեմատություն է կատարում Իսրայելի և վերջին ժամանակների եկեղեցու միջև. «Եվ այդ ամենը... իբրև խրատ գրվեց ձեզ, որ դարերի վերջին հասանք» (1 Կորնթ.10:1-13): Տարօրինակ չէ՞: Այն ժամանակ, ողջ

ճամփորդության ընթացքում, Աստծո ժողովուրդը, չնայած Կրակի սյունին, ժայռից բխող ջրին և մյուս բազմաթիվ օրհնություններին, անհնազանդ եղավ, տրտնջաց, տրվեց կռապաշտությանը, որն էլ ճակատագրական եղավ: Արական սեռի այն մարդիկ, որոնք դուրս էին եկել Մովսեսի հետ, թլփատվել էին, բայց մեռան, «որովհետև Տիրոջ խոսքին չէին լսել» (Չեսու 5:6): Նրանք, ովքեր ծնվել էին ճամփորդության ժամանակ թլփատվեցին միայն խոստացված երկիրը մտնելուց քիչ առաջ: Դրանից հետո Չեսուին հայտնվեց Տիրոջ բանակի գորավարը՝ մերկ սուրը ձեռքին, և հաղթական երթը սկսվեց(Չեսու 5-րդ գլուխ):

Այսօր մենք պետք է մեզ հարցնենք. «Ո՞վ հավատաց մեր լուրին, և Տիրոջ բազուկը ու՞մ հայտնվեց» (Ես.53:1): «Բայց բոլորը չէ, որ Ավետարանին հնազանդ եղան...» (Հռոմ.10:16): Ո՞վ է իսկապես ապրել սրտի թլփատությունը (Հռոմ.2:28,29) և ստացել հոգու նորոգություն (Կողոս.2:11): Սկիզբը, այսինքն՝ դարձը, կարևոր է, բայց այնուհետև գալիս է հավատքի և հնազանդության քննությունը, և վերջապես Աստծո կամքը կատարելուց հետո, հասնում ենք նպատակին (Եբր.10:36): Իսրայելի սերունդը, որը ծնվել էր անապատում, մտավ խոստացված երկիրը: Այսօր էլ կան խոստումի զավակներ, որոնք հավատում են խոստացված հոսքին (Հռոմ. 9:6-10, Փաղատ. 4:28,29): Նրանք կանգ չեն առնում այն բաների վրա, որոնք կատարվել են քառասուն, հիսուն, հարյուր տարի առաջ և շրջանաձև չեն պտտվում, այլ մասնակից են այն բաներին, որոնք Աստված կատարում է հիմա:

Բոլոր նրանց հետ, ովքեր հավատք ընծայեցին աստվածային պատգամին, մենք համարձակ առաջ ենք նայում՝ զորացած անցած քառասուն տարիների հրաշալի օրհնություններով, որոնք Աստված տվեց աշխարհով մեկ: Բայց թշնամին չնոռացավ իր բարկությունը գործադրել ընտրյալների վրա: Տերը Պետրոսին ասել էր. «Ահա սատանան ուզեց ձեզ ցորենի պես մաղել» (Ղուկ. 22:31): Մենք այդ չէինք սպասում, բայց դա կատարվեց:

1974 թվականին մենք Տիրոջը ընծայեցինք աղոթքի տունը, որը կառուցվել էր այն տարածքում, որը Տերն ինձ ցույց էր տվել տեսիլքում: Մինչև յոթանասունական թվականների վերջը մենք Կրեֆելդի եկեղեցում առանձնահատուկ կերպով զգացել ենք Տիրոջ ներկայությունը և ճաշակել ենք Սուրբ Դոգու պարզեցումը և գերբնական գործողությունը: Մարդիկ ուրիշ քաղաքներից գալիս էին լսելու խոսքը: Միաժամանակ ամեն ամիս ճամփորդությունների ժամանակ կարողանում էի թանկագին Պատգամը հասցնել մինչև երկրի ծայրերը: Յոթանասունական թվականների սկզբներին շեշտը դրվեց 1977 թվականի վրա: Շատերը կարծում էին, որ այդ տարում շնորհքի ժամանակը վերջանալու է, որովհետև Բրանհամ եղբայրը մի քանի անգամ 1977 թվականը հիշատակել էր վերջին ժամանակների հետ կապված: Բայց նա ոչ մի ամսաթիվ չէր նշել: Այն եղբայրները, որոնք կարծում էին, թե նրա ասածներից յուրաքանչյուրը պետք է լրջորեն ընդունել, կարծես դրանք «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ» խոսքը լինեն, եզրակացրին, որ շնորհքի ժամանակը վերջանալու է 1977 թվականին:

Ինչպես, որ դա համապատասխանում է Աստծո գերիշխանությանը, որը որոշում է ժամն ու ժամանակը, 1976 թվականի հուլիսի 16-ին ուրբաթ օրը ես

հրահանգ ստացա Տիրոջից, որի կատարումը շատ քննադատությունների առիթ տվեց «պատգամի շրջաններում»: Ես հասել էի աղոթքի տան արևմտյան մասի անկյունի մոտ, և մթնշաղն արդեն իջնում էր, երբ լսեցի Տիրոջ հրամայական ծայրը. «Իմ ծառա, գնա՛ հարևան հողատարածքը, ընծայիր այդ Ինձ համար և կառուցիր այնտեղ, որովհետև շատ երկրներից մարդիկ կգան, որոնց պետք է տեղավորել»: Մանրամասները հայտնի են: 1976 թվականի հուլիսի 19-ին ես խոսեցի հողամասի սեփականատիրոջ հետ, որը ինձ հայտնեց հողամասի հետ կապված իր ապագա ծրագրերը և ասաց, որ չի կարող վաճառել: Ես վերջացրի գրույցը այս խոսքերով. «Պարոն Տյուլկե, հիշեք, որ Տեր Աստված Իր ձեռքը դրել է այն հողամասի վրա, որը սահմանակից է մեր տարածքին, որտեղ գտնվում է Աստծո տունը»:

Ուղիղ երեք շաբաթ անց 1976 թվականի օգոստոսի 9-ին պարոն Տյուլկեն ժամը ութից առաջ զանգահարեց ինձ և ասաց. «Պարոն հովիվ Ֆրանկ, ես պետք է ձեզ վաճառեմ հողամասը: Ե՞րբ կարող եմք գնալ նոտարի մոտ»: Վաճառքի պայմանագիրը կնքվեց 1976 թվականի օգոստոսի 12-ին: Հողամասի գնումով և շինարարության ծրագրերով մենք ժխտեցինք այն վարդապետությունը, թե իբր 1977 թվականին ամեն ինչ վերջանալու է: Երբ առաջին շենքը սկսում էր կառուցվել, Պոլ Շմիդտ եղբայրը եկավ ինձ մոտ հողամաս, և ասաց. «Ֆրանկ եղբայր, այս շենքը բավական չէ տեղավորելու համար նույնիսկ մարդկանց կեսին, որոնք գալու են»: Հաջորդ առավոտյան կարդում էի Աստվածաշունչը և բացել էի 2 Մնաց.14:6 համարը, գիտեի, որ դրա միջոցով Տերը խոսում է ինձ հետ: Այնտեղ գրված է. «Եվ Հուդայի մեջ պարսպավոր քաղաքներ շինեց...» (2 Մնաց.14:6): Այսպես, 1977-1978 թվականներին հայտնվեցին միսիայի երկու շենքերը: Ես կարող եմ ասել բարի խղճմտանքով, որ Նոյի նման (Ծննդ. 6:22), Մովսեսի նման (Ելից 40:16) և Եղիայի նման (3 Թագ.18:36) ամեն բան արել եմ միայն Տիրոջ թելադրանքով և պատվերով:

Այն բանից հետո, երբ կատարվեց Տիրոջ պատվերը, և կառուցվեցին այցելուներին ընդունելու և տեղավորելու համար նախատեսված երկու շենքերը, սատանան ամեն ջանք արեց, որ խոչընդոտի Տիրոջ գործին: Բայց դա նրան չհաջողվեց և դա լավագույն կերպով ապացուցում է, որ դա իրոք Աստծո գործն է: Իսրայելը և Եկեղեցին միշտ թշնամու թիրախն են եղել: Երուսաղեմում միշտ պայքար է եղել, և այն արդեն 19 անգամ ավերվել է: Հիմա էլ հարձակումն ուղղված է ոչ թե Թել-Ավիվի կամ Հայֆայի դեմ, այլ Երուսաղեմի՝ Աստծո քաղաքի: Նույն կերպ, ոչ թե ցանկացած եկեղեցի, այլ միայն կենդանի Աստծո Եկեղեցին է թիրախ սատանայի հարձակումների համար և հոգևոր մարտերի մրցասպարեզ: Ըստ Հայտն. 12-րդ գլխի, վերջում վիշապը կանգնում է կնոջ առջև, որ կուլ տա այն արու զավակին, որը սահմանված է իշխելու ժողովուրդների վրա (Հայտն.22:26-29):

Ինչպես Եվայի հետ կատարվեց, այնպես էլ հիմա թշնամին աղավաղեց այն, ինչ Աստված պատվիրել էր: Այժմ «Ֆրանկ, Ռուսս, Շմիդտ վերնախավը» պետք է գնար, որովհետև Աստված ուրիշ եղբայրներ էր նշանակել: Եվ իսկապես հայտնվեցին երկուսը և իրենք իրենց բարձրացրին: Դրանից հետո սկսեցին ասել. «Քեզ Աստված չի կանչել, այլ սատանան: Սա քո գործն է, ոչ թե Աստծո, դրա համար պետք է քանդվի»: Թշնամու բացահայտ մտադրությունն էր քանդել խոսքը բերողի հեղինակությունը և անվստահելի

դարձնել այն եղբայրների հեղինակությունը, որոնց Աստված սկզբից ի վեր դրել էր նրա կողքին: Բրանհամ եղբայրն ասում էր. «Ջգուշացեք, դուք մեղավոր եք, երբ եղբոր դեմ ասում եք մի խոսք, որը ճիշտ չէ: Ձեզ պետք չէ դանակով նրա մեջքին հարվածել՝ սպանելու համար: Դուք կարող եք չարախոսել նրա դեմ և սպանել նրա հեղինակությունը: Եթե չարախոսում եք ձեր հովվին, վատ բան ասում նրա մասին, նույնն է թե՛ կրակել եք նրա վրա: Երբ նրա մասին ասում եք մի բան, որ ճիշտ չէ, սպանում եք նրա հեղինակությունը մարդկանց առջև: Դուք մեղավոր եք դրա համար» (57-09-22): Սատանան նպատակ էր հետապնդում. նա ուզում էր այս վայրում և ողջ աշխարհում ազատել ամբիոնը՝ մեկնությունների և վարդապետություններ այնտեղ դնելու համար: Դրա համար անհրաժեշտ էր, որ ճշմարիտ խոսքը բերողը համարվի անվատահելի:

Մինչև հիմա հաստատուն է մնում այն, ինչ Տերը տարիներ առաջ, հենց սկզբում ասել էր հրամայական ձայնով. «Իմ ծառա, Ինձ համար երեց նշանակիր Լեոնարդ Ռուսսին և Պոլ Շմիդտին»: Երկու երեցների ծառայությունը ավելի քան քառասուն տարիների ընթացքում օրհնություն է եղել թե՛ տեղական եկեղեցում, թե՛ ողջ աշխարհում: Դա նույն ձայնն էր, Տիրոջ զորեղ և թափանցող ձայնը, որն ինձ 1976 թվականին պատվիրել էր գնել հողամասը և շենք կառուցել: Միսիոներական տների կառուցումն ավարտվեց, և հաջորդ 25 տարիների ընթացքում մենք կարողացանք ամեն ամսվա առաջին շաբաթվա վերջում տեղավորել տարբեր երկրներից եկած 300-400 մարդու:

Ողջ դժոխքը դուրս էր եկել Աստծո ծրագրերի դեմ վերջին ժամանակներում, ամենակարևոր փուլում, որպեսզի խոչընդոտեր Աստծո գործին ամեն կերպ և կործաներ այն: Գլխավոր հարձակումը բնականաբար ուղղված էր խոսքը բերողի դեմ: Ամենասարսափելի զրպարտությունները, որոնք վեր են նորմալ մարդու պատկերացումներից և որոնք հնարավոր չէ պատմել, տարածվեցին աշխարհով մեկ: Կործանարար զրպարտություններ սկսվեցին, որոնց նմանը նախկինում չէր եղել, և դրա նպատակն էր կորստյան տանել հոգիները: Նրանք, ովքեր ենթարկվեցին այդ հոգուն, հավատում և նման զրպարտություններ են տարածում մինչև այսօր: Նրանք չեն կարծում, որ մտածված կերպով խախտում են պատվիրաններից մեկը. «Քո դրացու դեմ սուտ վկայություն մի արա...» (Ելից 20:16): Իսկ Յոռն.1:30 համարում ասվում է. «Չարախոսներ, բամբասողներ, Աստծուն ատողներ, նախատողներ, ամբարտավաններ, գոռոզներ, չար բաներ հնարողներ...» (Յոռն.1:30): 1 Կորնթ.5:9-12 համարներում նախատողները դասվում են խաբեբաների և կռապաշտների շարքին:

Մանկասպանությունները Մովսեսի ծննդյան ժամանակ, ինչպես նաև Փրկչի ծննդյան ժամանակ, տեղային բնույթ էին կրում և սահմանափակված էին իրենց շրջանով: Սատանան մարդասպան էր հենց սկզբից (Յովհ.8:44), Կայենը նույնպես (1 Յովհ. 3:12) և եղբորն ատող ամեն հավատացյալ, առանց բացառության, նույնպես մարդասպան է: Այդպես է ասում Աստծո խոսքը. «Ամեն ոք, ով իր եղբորն ատում է, մարդասպան է, և գիտեք, որ ամեն մարդասպան իր մեջ հաստատված հավիտենական կյանք չունի» (1 Յովհ. 3:15): Բոլոր նրանք, ովքեր այն ժամանակներից ի վեր չեն ուզում ճշմարտությամբ լսել հավիտենապես մնացող Աստծո խոսքը, մի օր

հիասթափություն են ունենալու: Նա, ով վճռական ժամին չի ընդունում ճշմարտության սերը, դատապարտված է ստերին հավատալու: Խառնուրդը հնարավոր չէ: Նա, ով իր սիրտը բացում է սատանայի ասածների համար, ավտոմատ կերպով փակում է Աստծո ասածների համար: Լույսն ու խավարը, կյանքը և մահը իրարից բաժանված են հավիտյան:

Այժմ մենք բոլորս մեզ այս հարցը պետք է տանք Աստծո առջև՝ Աստծո որոշումը հնարավոր է փոխել: Մարդիկ իրավունք ունեն՝ ծառայությունից հեռացնել այն եղբայրներին, որոնց Տերը կանչել է իրենց անունով և երեց է նշանակել: Ճիշտ էր արդյոք Տիրոջ պատվերով կառուցել միսիայի երկու շենքերը՝ հյուրերին տեղավորելու համար, թե՞ դրան հակառակ, ճիշտ էր 1979 թվականի մայիսի առաջին շաբաթից հետո մարդկանց տուն ուղարկել՝ ասելով. «Այստեղ ամեն ինչ ընդմիշտ վերջացած է»: Այդ որոշումը ոչ ոք չի կարող շրջանցել, և յուրաքանչյուրի համար դա հետևանք է թողնում ողջ հավիտենության համար: Թող ոչ ոք չխաբի ինքն իրեն, Աստված չի ծաղրվի:

Բոլոր նրանց համար, ովքեր հաստատուն և հավատարիմ են մնացել, այսօր դեռ անհասկանալի է, որ շատ եղբայրներ և քույրեր, որոնք այստեղ լսել են Խոսքը, փրկություն և բժշկություն են ստացել քարոզչության միջոցով, մկրտվել են այստեղ և որոնց հետ միասին տոնել ենք Տերունական ընթրիքը, հեռացել են դառը թշնամությամբ և խուսափում են ամեն հաղորդակցությունից: Մինչդեռ ամեն ճշմարիտ քրիստոնյա պետք է գիտակցի, որ Հիսուս Քրիստոսը վերացրել է բաժանման պատը, ոչնչացրել է թշնամությունը և բոլոր իրեն պատկանողներին շնորհել է ազատություն և հաշտություն, որոնք կապված են լիակատար ներման հետ:

«Որովհետև Նա է մեր խաղաղությունը, որ երկուսին մեկ արեց ու մեջտեղի բաժանող պատը՝ թշնամությունը, վերացրեց իր մարմնով՝ հրամաններով գրված պատվիրանների օրենքը խափանելով, որպեսզի իրենով երկուսից մեկ նոր մարդ ստեղծի՝ խաղաղություն անելով, և իր խաչով երկուսին մեկ



մարմնով Աստօծ հետ հաշտեցնի՝ նրանով թշնամությունն սպանելով» (Եփես. 2:14-16):

Բոլորը գիտեն, որ թշնամությունները և ավերածությունները չեն կարող գալ Աստծուց, այլ միայն թշնամուց: Երկուսից միայն մեկն է հնարավոր՝ ճշմարիտ է կամ այն, ինչ Աստված որոշել է և որը տեսանելի է բոլորի աչքերի առջև այստեղ՝ միսիոներական կենտրոնում, կամ այն, ինչին ուզում էր հասնել սատանան, որը ներկայանում է լուստ հրեշտակի տեսքով:

Ամեն ամսվա առաջին շաբաթ-կիրակին տարբեր երկրներից մինչև ինը հարյուր մարդ է գալիս միսիոներական կենտրոն խոսքը լսելու և հոգևոր սնունդ ստանալու համար: Գերմաներեն լեզվով քարոզները համաժամանակյա թարգմանությամբ թարգմանվում են տասներկու տարբեր լեզուներով, այնպես որ ներկաներից յուրաքանչյուրը քարոզը լսում է իր մայրենի լեզվով: Նույն պահին ողջ աշխարհում մարդիկ կարող են հավաքություններին մասնակցել ինտերնետի միջոցով: Այդ փաստերը մեկնաբանության կարիք չունեն, և ոչ ոք չի կարող ժխտել դրանք: Հարց է առաջանում՝ ինչպե՞ս է հնարավոր, որ այս վայրերում ապրող մարդիկ, որոնք գիտեն Աստծո որոշման մասին, կարողանան արհամարհանքով շրջանցել այն վայրը, որ Աստված Ինքն է ընտրել: Այդպես վարվելով ոչ թե մարդուն են արհամարհում, այլ Աստծուն, ով իրականացնում է փրկության պատմությունը: Նրանց ի՞նչ օգուտ կտա պատգամի, մարգարեի և հափշտակության մասին խոսելը: Դա՞ է կատարյալ սերը, որի մասին խոսել են Պողոսը և Բրանհամ եղբայրը, այն սերը, որը երբեք չի դադարի և վերջում կմտնի փառքի մեջ:

Նա, ով չի ուզում ընդունել այն օրհնությունները, որոնք մենք Սուրբ Հոգով ճաշակել ենք յոթանասունական թվականների փառավոր հավաքությունների ժամանակ, Սուրբ Հոգու դեմ հայհոյություն անելու վտանգի մեջ է: Ապստամբությունը սկսվեց այն ժամանակ, երբ մարդկային կամքը բարձրացավ օծության, Աստծո խոսքի և Աստծո կամքի դեմ: Ով անկեղծորեն համենատի այն, ինչ Տերն Ինքն է ասել այն բանի հետ, ինչ թշնամին է ասել սուտ ներշնչումով, կհասկանա, թե որն է ճիշտ, և որն է իրականանալու: Մենք այդ մեծ դասից պետք է խրատ առնենք ողջ ապագայի համար: Մինչև վերջ Տիրոջից պետք է խնդրենք հոգիների զանազանության Սուրբ Հոգու պարզը: Այն, ինչ Աստված ասում է և անում Իր խոսքի համաձայն, միշտ ծառայում է եկեղեցու շինությանը: Այն, ինչ թշնամին է ասում և անում, բերում է ավերածություն: Աստված միշտ օգտագործում է Իր ծառաներին, իսկ թշնամին օգտագործում է մարդկանց, որոնց միջոցով կարող է ավելի շատ վնասներ հասցնել: Այն, ինչ Աստծո օգնությամբ կառուցվել էր բազում տարիների ընթացքում, սատանան՝ եղբայրների չարախոսը, ուզում էր կործանել մեկ օրում:

Աստծո մարդիկ, չնայած իրենց բարձր կոչմանը, ընդամենը մարդ էին, թեև «աստվածներ» են կոչվել: Նրանց մեջ աստվածային էր Խոսքը, որի միջոցով հաղորդ էին լինում աստվածային բնությանը, և նույնը վերաբերում է մեզ (1 Պետր.1:3-11): Ամմիջապես հետո Տերն ասում է Հովհ.10:35 համարում. «Հնարավոր չէ, որ Գիրքը բեկանվի» (Հովհ.10:35): Իրոք, Սուրբ Գիրքը չի կարող բեկանվել: Աստծո կոչումն ու նախասահմանությունը վերջնական են, անփոփոխ և հավիտենական. այդպես է սովորեցնում Սուրբ Գիրքը (Հռոմ. 8:28-39, Եփես. 1-ին գլուխ և այլ համարներ): Սուրբ Գիրքը չի կարող բեկանվել նրա համար, որ մի օր Նոյը չափազանց շատ խմեց (Ծննդ. 9-րդ գլուխ): Գրված է, որ Նոյը շնորհք գտավ Աստծո աչքերի առջև, և դա էր կարևորը՝ նա մնաց արդարության քարոզիչ: Նրան կարող էին մերժել և ծաղրել, բայց ոչ ծառայությունից հանել: Տերն Ինքն էլ քարոզեց բանտում գտնվող հոգիներին, որոնք չէին հավատացել նրա պատգամին և մնացել էին անհնազանդության մեջ, և դրանց մեջ էին նաև Աստծո որդիները (Ծննդ. 6-րդ գլուխ): Դժոխքում չափազանց ուշ էր իրենց հոգիների փրկության համար (1 Պետր. 3:18-22): ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ. «Եվ ինչպես Նոյի օրերին եղավ, այնպես էլ Մարդու Որդու օրերին կլինի» (Ղուկ.17:26):

Աբրահամը չէր կարող իր ծառայությունից հանվել նրա համար, որ գնաց Հագարի մոտ և հետո կին վերցրեց Քետուրային: Սուրբ Գիրքն ասում է. «... քեզ շատ ազգերի հայր արեցի»,--- Աստծո առաջ, որին հավատաց...» (Հռոմ. 4:17): Սուրբ Գիրքը չէր կարող բեկանվել նրա համար, որ Մովսեսը ամուսնացել էր եթովպացի կնոջ հետ: Մարիամն ու Ահարոնը ոչ մի իրավունք չունեին իրենց եղբայր Մովսեսի դեմ խոսելու: Նաև Կորնել, Դաթանը և Աբիրոնը՝ ծաղրողները, ոչ մի իրավունք չունեին Մովսեսին ծառայությունից հանելու, ողջ ժողովրդին նրա դեմ հանելու և բաժանում առաջացնելու (Թվոց 16-րդ գլուխ):

Սուրբ Գիրքը չի կարող բեկանվել նրա համար, որ Դավիթը շնություն գործեց: Օրենքի մեջ Աստված բոլորովին էլ չի խոսել բազմակնության մասին, այլ միայն ասել է. «Եթե իր համար ուրիշն առնե...» (Ելից 21:10): Բայց Տեր Աստված ասել է. «Եթե մեկը այր ունեցող կնոջ հետ պառկած գտնվի, այն ժամանակ երկուսն էլ մեռնեն...» (2 Օրին.22:22): Ամուսնությունը և ընտանիքը Աստծո առանձնահատուկ պաշտպանության տակ են: Դավիթը շնություն էր գործել և ըստ օրենքի պետք է քարկոծվեր Բերսաբեի հետ: Նա խախտել էր երկու պատվիրանները՝ «Մի՛ սպանիր» և «Մի՛ շնացիր»: Դավիթը շնացել էր, որովհետև վերցրել էր Ուրիայի կնոջը: Դավիթը մարդասպան էր, որովհետև սպանել էր տվել այդ կնոջ ամուսնուն: Փառք Աստծուն, երկուսից ոչ մեկը ինձ չի վերաբերում:

Հնարավոր չէ, որ Գիրքը բեկանվի: Դավիթը մնաց մարգարե, Դավիթը մնաց թագավոր, և այն, ինչ նա հայտնեց Հոգով, կատարվեց և հավիտյան կկատարվի: Մինչդեռ հավիտյան ճշմարիտ է մնում այն, որ Աստված մեկ Եվա բերեց Ադամին, և ինչպես Պողոսն է գրել՝ «Թող ամեն մարդ իր կինն ունենա, ամեն կին իր ամուսինն ունենա» (1 Կորնթ.7:2): Բայց ո՞վ է այն մարդը, որ կուզեմար դատապարտել Դավթին և այլևս չկարողալ նրա

սաղմոսները, երբ գրված է. «Երանի այն մարդուն, որ Տերն անօրենություն չի համարում նրան» (Սաղմ.32:2): Մեղքերի թողությունն այնքան կատարյալ է, որ Աստված այլևս չի հիշում մեղքերը: Նա, ով ուրիշ մարդու օրինազանցությունները անարգանքի սյունին է գամում, հայիոյություն է անում Աստծո դեմ և ոտնատակ է տալիս Գառան Արյունը, Ուխտի Արյունը և խայտառակում է խաչյալ Քրիստոսին:

Սովորական կյանքում Աստծո ծառաները միշտ չեն կարողացել գտնվել Աստծո կատարյալ կամքի մեջ, որը Նրան հաճելի է: Երբեմն կատարվել է նաև Աստծո թույլատրող կամքը: Բայց Խոսքը, որ նրանք ստացել են և փոխանցել մեզ, միշտ և հավիտյան Աստծո կատարյալ Խոսքն է: Աստված, որ ամեն բան նախօրոք գիտեր, կատարել է Իր ընտրությունը Իր ծառաներին կանչելիս: Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին, կրում է «Դավթի որդի» պատվանունը: Ո՛վ է այն մարդը, որն իրեն իրավունք է վերապահում կասկածի տակ դնել Աստծո որոշումները: Այդպիսի անձնավորությունը կամ բռնված է, կամ էլ Աստծո կողմից մերժված: Դրանք ծաղրողներ են, որոնց մասին Աստվածաշունչն ասում է Գործք 13:41 համարում. «Տեսե՛ք, անարգողներ, և զարմացե՛ք ու ոչնչացեք, որ ես ձեր օրերին մի գործ եմ անում...»: Հենց այդ գործն է Աստված հիմա անում, թեև սատանան ամեն կերպ փորձում է խոչընդոտել դրան: Հիսուսը հաղթական է: Նա թույլ չի տա, որ դժոխքի դուռերը հաղթեն ճշմարիտ Եկեղեցուն: Անարգողները միշտ պատրվակ են փնտրում և դուրս գալիս նրա դեմ, ում Աստված նշանակել է ծառայության: Այսօր էլ նրանք ասում են. «Ողջ եկեղեցին սուրբ է: Բոլոր եղբայրները կանչված են: Բոլորը ծառայություն ունեն»: Իսկ նրանց, ում Աստված է հաստատել, նախատում են. «Դուք ձեր մասին շատ բարձր կարծիք ունեք: Մարդկանց աչքին թոզ եք փչում»: Մինչդեռ ճիշտ հակառակն է: Աստծո կոչումն իր մեջ ընդգրկում է այն, ինչ Տերն ասաց Պողոսին. «... որովհետև քեզ նրա համար երևացի, որ պաշտոնյա դարձնեն քեզ՝ այն բաներին վկա լինելու համար, ինչ դու տեսար, նաև այն բաներին, որոնցով պիտի երևան քեզ: Որոպեզի քեզ ազատեն այդ ժողովրդից ու հեթանոսներից, որոնց մեջ ուղարկում եմ քեզ՝ նրանց աչքերը բացելու, խավարից դեպի լույսը և սատանայի իշխանությունից դեպի Աստված դարձնելու համար, որպեսզի նրանք, ինձ հավատալով, մեղքերի թողություն և սրբերի հետ ժառանգություն ստանան» (Գործք 26:16-18):

Աստված վերցնում է և հաստատում թագավորներին (Դանիել 2:19-23), մինչդեռ հոգևոր ոլորտում սահմանված մարդկանց միայն հաստատում է, որովհետև «Որովհետև Աստծո շնորհն ու կոչումը անփոփոխելի են» (Հռոմ. 11:29): Աստծո ծառաները պետք է կատարեն Նրա առաջադրանքը պատվի և անարգանքի մեջ: Ոմանց համար նրանք «Քրիստոսի անուշ հոտն են՝ դեպի կյանք», մյուսների համար՝ «մահվան հոտ՝ դեպի մահ» (2 Կորնթ. 2:14-17): Ինչպես և մեր Ուսուցիչը, նրանք դրված են ոմանց բարձրանալու, մյուսների էլ ընկնելու համար, հակառակության նշան են, որ սրտերի խորհուրդները հայտնվեն (Դուկ. 2:34-35): Ամեն մարդ ասի ու դողով պետք է իր անձի փրկությունը գործի (Փիլիպ.2:12): Հետևյալ համարը վերաբերում է բոլոր ընտրյալներին առանց բացառության. «...ոչ էլ ստեղծված մի ուրիշ բան չեն կարող մեզ բաժանել Աստծո սիրուց, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի մեջ է» (Հռոմ. 8-րդ գլուխ), նաև այն, ինչ գրում է Պողոս առաքյալը. «Պողոս՝ Աստծո

ծառա և Հիսուս Քրիստոսի առաքյալ, Աստծո ընտրյալների հավատի և աստվածապաշտական ճշմարտության գիտության համեմատ...» (Տիտ.1:1): Այժմ պետք է բոլոր ժողովուրդներին քարոզվի Հիսուս Քրիստոսի հավիտենական Ավետարանը Աստծո Թագավորության մասին: Նույնքան կարևոր է ընտրյալների հավատքը, որ մեկընդմիջտ ավանդվել է սրբերին (Յուդա հ. 3):

Ցավալի է տեսնել, որ պատգամի մեջ եղող մարդիկ չեն հավատում այնպես, ինչպես Սուրբ Գիրքն է ասում, այլ հավատում են այն բաներին, որոնք ներկայացվում են որպես հատուկ հայտնություններ: Նաև կյանքի պատմությունները, որսորդության պատմությունները ոչ մի կապ չունեն այս ժամանակի համար խոստացված Խոսքի հետ, այլ մարդուն տրված պաշտամունք են, ցուցահանդեսներ, որոնք լիովին նվիրված են մարդուն: Նաև բաժանում են փայտե խաչեր, կոնֆետներ, զործվածքի կտորներ, որոնք իբր թե պատկանել են մարգարեին. դա ավելի շուտ նման է սնապաշտության և եկեղեցական մասունքների պաշտամունքի, քան Հիսուս Քրիստոսի Ավետարանին: Մենք սուրբգրային ձևով ենք դասավորում Բրանհամ եղբոր ծառայությունը և հեռանում ենք բոլոր խմբերից, որոնք նրան են վկայակոչում և Աստծո Խոսքը չեն ընդունում որպես միակ հեղինակություն:

Աստվածաշնչում ոչ մի խոստում չկա այն վարդապետության վերաբերյալ, թե Բրանհամ եղբայրը Նորից ծառայություն է ունենալու վրանի տակ: Նաև սուրբգրային ոչ մի հիմք չունի այն վարդապետությունը, ըստ որի Տերն արդեն եկել է որպես Ուխտի հրեշտակ ըստ Հայտն. 10-րդ գլխի: Սուրբգրային չեն նաև աշխարհով մեկ գոյություն ունեցող մոլորությունները յոթ որոտների վերաբերյալ և այլն: Տիրոջ գալուստը, թե որպես Փեսա (Մատթ. 25:1-13), թե որպես Մարդու Որդի (Մատթ. 25:31-36), թե որպես Ուխտի հրեշտակ (Հայտն. 10:1-7), միշտ կապված է Իր անձնական, մարմանվոր ներկայությամբ («պարուսիա»): Նրա յուրաքանչյուր գալուստի ժամանակ կկատարվի այն, ինչ գրված է, այդպես կլինի նաև Նրա գալուստը որպես Տեր Աստված, երբ Իր ոտքերը կդնի Ձիթենյաց Լեռան վրա (Ձաք. 14:4):

Եթե Աստծո Խոսքը հաշվի չեն առնում, կարող է պատահել, որ այն, ինչ համարում են «Աստծո ձայն», բոլորովին էլ Աստծո ձայն չլինի: Աստված Ինքը Իր Խոսքի մեջ արտահայտել է փրկության վերաբերյալ Իր գաղափարները: Ինչու՞ այն մարդիկ, որոնք իրենց վերագրում են գլխավոր դերը, ոչինչ չունեն պատմելու 1965-1985 թվականների վերաբերյալ: Մի՞թե այդ ժամանակաշրջանում Աստված ոչինչ չի արել և միայն 1985 թվականին է վերսկսել Իր գործը: Աստված վերցրեց Իր մարգարեին, բայց մինչ այդ Նա հոգ էր տարել, որ Իր պատգամը շարունակի տարածվել առանց ընդմիջման: Ո՞վ է այն մարդը, որ ուզում է ժխտել այդ:

Ամիմաստ է թանկարժեք գերեզմանը գեղեցիկ բուրգով զարդարելը և ուխտագնացության վայրեր ստեղծելը, և միաժամանակ Ա ս տ ծ ո այժմյան գործն անարգելը: Այն ժամանակվա դպիրներն ու փարիսեցիները չէի՞նք զարդարում մարգարեների գերեզմանները: Աստծո ճշմարիտ զավակները իրենց սրտում են ընդունում այն, ինչ Տերն ասել է նրանց

մասին, ում կանչել է և ուղարկել. «Ձեզ լսողն ինձ է լսում և ձեզ մերժողն ինձ է մերժում, իսկ ինձ մերժողն էլ ինձ ուղարկողին է մերժում...» (Ղուկ. 10:16):

Մենք, անշուշտ, մոտ ենք նպատակին: Հին Կտակարանի զոհերի մասին գրված է. «... որոնք խղճմտանքի համաձայն չէին կարող կատարյալ անել պաշտամունք մատուցողին» (Եբր.9:9): Գողգոթայի խաչի վրա Հիսուս Քրիստոսի կատարյալ զոհի մասին գրված է. «Որովհետև մեկ զոհով սրբվողներին հավիտյան կատարյալ դարձրեց» (Եբր.10:14):

«Այա կամբողջացնեք իմ ուրախությունը, որ նույն միտքն ունենաք, նույն սերն ունենալով՝ միաշունչ նույնը խորհեք: Ոչ մի բան թող չլինի հակառակությամբ և ոչ էլ սնապարծությամբ, այլ խոնարհությամբ մեկը մյուսին թող իր անձից ավելի լավ համարի» (Փիլիպ. 2:2,3):

«Հետևում են դեպի նպատակը՝ Հիսուս Քրիստոսով Աստծո վերին կոչման մրցանակին: Արդ մենք, որ կատարյալ ենք, սա մտածենք, և եթե մի բան ուրիշ կերպ մտածեք, այն էլ Աստված կհայտնի ձեզ» (Փիլիպ. 3:14,15):

Ով ուշադրություն է դարձնում աստվածաշնչային մարգարեությունների իրականացմանը և կարևոր համաշխարհային իրադարձություններին, գալիս է այն եզրակացությանը, որ մենք իսկապես մոտ ենք նպատակին: Մի հայացք ներկա իրադարձություններին, մի հայացք Իսրայելին, մի հայացք իսլամական աշխարհին, մի հայացք Եվրոպայի կրոնական և քաղաքական միությանը, գլոբալիզացիային, համաշխարհային կառավարությանը, մի հայացք Հռոմին, և արդեն մնում է մի հայացք էլ ուղղել դեպի վեր.

«Եվ երբ այս բաներն սկսեն լինել, վերև նայեցեք ու ձեր գլուխները բարձրացրեք, որովհետև ձեր փրկությունը մոտ է» (Ղուկ.21:28):

Հ Ե Տ Ա Դ Ա Ր Զ Հ Ա Յ Ա Ց Ք Ա Ն Ց Ա Ծ Ք Ա Ռ Ա Ս ՈՒ Ն Տ Ա Ր Ի Ն Ե Ր Ի Ն

Արդեն վաթսուհինյակն թվականներին ես այցելեցի արևելյան Եվրոպայի երկրները: Այն ժամանակ դեռևս կար «երկաթյա վարագույրը», և այն զրեթե անթափանցելի էր: Չնայած դրան այս ժամանակվա համար տրված խոսքը հասավ արևելյան բլուկ: 1989 թվականից հետո կարողացա ազատորեն քարոզել ոչ միայն Մոսկվայում, այլև Ուրալում, Սիբիրում և ողջ արևելյան Եվրոպայում: Բոլոր նրանք, ովքեր Աստծո վախն ունեն, կհասկանան, որ երկրի վրա եղած ամենամեծ պատասխանատվությունը կապված է աստվածային կոչման հետ (Գործք 26:19): Եթե ես մեկ անգամ ևս հիշատակեցի ամենակարևոր իրադարձությունները, որոնք Աստված ինձ տվել է Իր շնորհքով, ապա դրա նպատակն էր միայն բոլորին ցույց տալ Տիրոջ հավատարմությունը և հոգատարությունը Իր Եկեղեցու նկատմամբ: Կան անձնական փորձառություններ, որոնք ունենում են բոլոր հավատացյալները՝ դարձ, վերստին ծնունդ, Սուրբ Հոգու մկրտություն, բժշկություն, և այլն, բայց կան նաև այնպիսի փորձառություններ, որոնք

ուղղակիորեն կապված են փրկության ծրագրի հետ, և ուրեմն շատ կարևոր են եկեղեցու համար: Դա առանձնապես վերաբերում է Պողոս առաքյալին և նույնիսկ Բրանհամ եղբորը, որոնք կարևոր առաջադրանք ունեին կատարելու փրկության պատմության մեջ:

Այժմ նորից են վկայակոչում 1965 թվականից հետո ընկած ժամանակահատվածը: Հենց սկզբից Ալեքսի Բարիլյե եղբայրը ընդունեց իր դիրքորոշումը Պատգամի հանդեպ: Աստված օգտագործեց նրան մեծ օրհնություններ բերելու նախ Եվրոպայի ֆրանսախոս երկրներում, այնուհետև աֆրիկյան երկրներում: Իր խմբի հետ նա ֆրանսերեն է թարգմանում գրքույկները: Բացի այդ նա հատկապես ճամփորդում է կենտրոնական Աֆրիկայի երկրներում և անձամբ խոսքը քարոզում ժողովրդին: Մեծ վարձ է սպասում մեր հավատարիմ եղբորը: Քանի որ 1955 թվականին նա Շվեյցարիայում մասնակցել է Բրանհամ եղբոր հավաքությանը, նա էլ, որպես ակնատես, կարող է վստահությամբ պատմել այն, ինչ տեսել և ապրել է:

Էսյեն ժենտոն եղբայրը նույնպես անձամբ լսել է Բրանհամ եղբորը և տեսել է այդ արտասովոր ծառայությունը: Նա նույնպես սկզբից ի վեր ծառայել է Տիրոջը և մեծ օրհնություններ բերել նախ Իտալիայում, այնուհետև ուրիշ երկրներում: Այս երկու եղբայրները ֆրանսերեն և իտալերեն են թարգմանում Բրանհամ եղբոր քարոզները, նաև Կրեֆելդում հրատարակված շրջաբերական նամակները, գրքերն ու գրքույկները: Նրանք իրենց ողջ կյանքը նվիրել են իրենց Տիրոջն ու Փրկչին: Այս եղբայրները ուղիղ են մատակարարում Աստծո խոսքը:

Բոլորովին ուրիշ, բայց նույնքան կարևոր աշխատանք էր կատարում Դետլեֆ Մեհներտ եղբայրը, որին Տերը վերցրեց 2003 թվականի ապրիլին: Լրագրողի պրոֆեսիոնալ գործունեության հետ մեկտեղ նա կարևորություն էր տալիս բոլոր հարանվանությունների միջև կապերին: Իրոք, 1989 թվականից նա Տիրոջ կողմից առանձնահատուկ կերպով օգտագործվեց այդ նպատակով, այնպես որ, հնարավորություն ունեցա մեկ շաբաթ շարունակ խոսել Մոսկվայի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետի ուսանողների հետ: Իր արտասովոր ընդունակությունների շնորհիվ նա կարողացավ ինձ համար նոր կապեր հաստատել ողջ աշխարհում, նույնիսկ մուսուլմանական երկրներում: Մեհներտ եղբայրը Իսրայելի համար առանձնահատուկ բարեկամ էր և օրհնության հետքեր է թողել Աստծո թագավորությունում: Մեծ վարձ է սպասում իմ սիրելի եղբորը:

Անցած տարիների ընթացքում Փարիզի Դիոյե և Ժիլբեր եղբայրները, Բրյուսելի Լեոնարդ Լիֆեզ եղբայրը, Շվեյցարիայի Ուրս Գրաֆ եղբայրը և Ավստրիայի Վալտեր Մյուլլեր եղբայրը մեծ օրհնություն են եղել տարբեր երկրներում: Աշխարհում հարյուրավոր եղբայրներ մնացել են խոսքի մեջ և ծառայում են Աստծո ժողովրդին: Նրանցից շատերը մեծ պատասխանատվություն են կրում իրենց քաղաքում և երկրում: Մենք բոլորի հետ կապված ենք Աստծո սիրով:

Տեսնելուց հետո, թե Աստված ինչ է արել մեր ժամանակներում մենք վստահությամբ նայում ենք Անտեսանելիին, կարծես թե տեսնում ենք Նրան (Եբր. 11:27), որովհետև գիտենք, որ Նա կկատարի Իր խոստումներից յուրաքանչյուրը (Հռոմ. 4:13-25): Այն ամենը, ինչ Աստծո շնորհքով կատարվեց Աստծո Թագավորությունում, հատկապես վերջին քառասուն տարիների ընթացքում, գերազանցեց մեր բոլոր սպասումները: Իրականում դա նախապայման էր այն բաների, ինչ կատարվելու են հաջորդ ժամանակահատվածում: Աստծո Խոսքը քարոզվել է աշխարհով մեկ հավաքույթների, գրքերի, գրքույկների, հեռուստահաղորդումների միջոցով: Գերմաներեն լեզվով ունենք Բրանհամ եղբոր մոտ 200 քարոզներ, որոնք անընդհատ պետք է վերահրատարակվեն: Ամեն ամիս առաջին շաբաթ-կիրակին քարոզներ են լինում այստեղ՝ միսիոներական կենտրոնում, որոնք ուղարկվում են աշխարհով մեկ՝ ծառայության մեջ գտնվող եղբայրներին, որոնք էլ իրենց հերթին փոխանցում են այն, ինչ ստացել են:

Երբ ես 1966 թվականին ինձ ամբողջությամբ դրեցի Տիրոջ տրամադրության տակ, արցունքով ուխտ արեցի երկնքի Աստծուն և գիտակցաբար ին կյանքը նվիրեցի Նրա ծառայությանը: Նաև ես ասացի. «Հավատարիմ Տեր, այնպես արա, որ ես Քո Խոսքը քարոզեմ այնպես, որ բոլոր լսողները հավատացյալ դառնան և փրկվեն: Մի՛ թույլ տուր, որ ասեմ այնպիսի բան, որը չի կարող մնալ Քո առջև: Դու հոգ տար Քո Եկեղեցու և Քո գործի համար նաև նյութական տեսանկյունից, որովհետև ես երբեք չեմ խոսելու փողի մասին»:

Փառք Աստծուն, մինչև այսօր կարողացել ենք աշխարհով մեկ ամեն ինչ ուղարկել ձրի և կարիք չենք ունեցել որևէ բան վաճառելու: Մեզ համար կարևոր է աստվածային պատգամը տանել մինչև երկրի ծայրերը: Միսիոներական ճամփորդությունների, հրատարակությունների և առաքումների բոլոր ծախսերը, ինչպես նաև միսիոներական կենտրոնի բոլոր աշխատողների աշխատավարձերը և հեռուստահաղորդումների բոլոր ծախսերը փակվում են ձեր ընծաների միջոցով:

Այդ առթիվ հատկապես շնորհակալություն են հայտնում ձեզ, որ բնակվում եք գերմանախոս երկրներում, որովհետև հենց սկզբից Գերմանիայի, Ավստրիայի և Շվեյցարիայի եղբայրներն ու քույրերն են աջակցել գործին: Հետագայում նրանց միացան մարդիկ տարբեր երկրներից: Դուք, որ ձեր սրտում եք կրում Աստծո գործը և հոգ եք տանում, որ բարի լուրի պատգամաբերների ոտքերը կարողանան տանել Խոսքը (Ես. 52:7, Հռոմ. 10:15), թող Աստված առատորեն վարձահատույց լինի ձեզ:

Զգիտենք՝ դեռ ինչքան ժամանակ է մեզ մնում: Անշուշտ, շատ քիչ: Զգաստ լինենք, գնենք ժամանակը և պատրաստ լինենք գործելու քանի դեռ ցերեկ է, որովհետև գիշեր կգա, որում ոչ ոք չի կարող աշխատել:

Եղեք օրհնված և մնացեք Տիրոջ շնորհքի մեջ նագովրեցի Տեր Հիսուս Քրիստոսի Անունով: Թող 2006 թվականը հրեյլանական տարի լինի, որում

բոլորը վերադառնում են իրենց սկզբնական հոգևոր ժառանգությանը: Ձեր անենության աղոթքներում հիշեք իմ մասին, ողջ գործի և բոլոր եղբայրների մասին:

Գործելով Աստծո հանձնարարությամբ՝

Bt. Frank